

# ՌԻՒՐՍԻԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ազգային, Գիտական, Գրական եւ Քաղաքական

Ի Գ. ՏԱՐԻ — ԹԻՒ 23

||

2 ՅՈՒԼԻՍ 1905

ԲՈՎԱՆԿԱԿՈՒԹԻՒՆ

ԱՏԱԲԱԶԱՐ ԵՒ ՀԱՅՈՒՀԵԱՑ ՎԱՐՃԱՐԱՆ (ձամ-

բորդի Տպաւորուքիւններ)

«ԲԻՒՐԱԿՆ»Ի ԵՐԿՐՈՐԴ ՎԵՑԱՄՍԵԱՆ

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԱՐԱՆԸ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՏՈՐԻՆ

ՄԷՋ ԿԱՄ ՍԱՂՄՈՍՆԵՐԸ.—Ե. Գորձաձուքիւնը

ԴԱՇՏԻ ԿԵԱՆՔ (Բանաստեղծութիւն)

ՆԿԱՐԻՉԸ

ՕՍՄԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Միւնիք Փաշային

«Նիւնեք»ը

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔ

ԷԼԻՉԷ ՌԸՔԼԻԻ ՄԵՇ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԳԷՏԸ

ԱՐԵՒԵԼԱԳԷՏՆԵՐՈՒ ԺԴ.ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

ԻՋՄԻՐԵԱՆՑ ԳՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԷՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԱՐԺԱ-

ՆԱՑՈՂ ԵՐԿԵՐԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ

ՅԱԿՈԲՈՍ Հ. ՃԷՃԻՉԵԱՆ  
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ս. Պ. ՄԱՆՈՒԿԵԱՆ  
ՏԻԳՐԱՆ ԳԱՍԱՊԵԱՆ  
ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌՔ

ՍՏԵՓԱՆ ԹԱՊԱԳԵԱՆ  
ՄԻՀՐԱՆ



Հատը 40 փարա

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԷՐԵԱՆ

Դիւրութիւն մը ընծայելու համար մեր բաժանորդներուն՝ իրենց վընարումներուն համար, եւ ամէն անոնց՝ որոնք կ'ուզեն բաժանորդագրուիլ թերթիս՝ ստորեւ կը հրատարակենք անունները մեր գաւառական գործակալներուն՝ որոնց կրնան դիմել իրենց հաւելներուն վընարման կամ բաժանորդագրուելու համար:

Աճափա. — Լայկազն կֆ. Խանդամուր

Ատարազար. — Սեփան կֆ. Սափրիչեան

Ատանա. — Խաչատուր կֆ. Մինասեան

Երզնկա. — Յարութիւն կֆ. Տոնարոսեան

Իզմիր. — Կարապետ կֆ. Մայիսեանեան

Խարբերդ

Մաճուրէթ. Իւլ-Ազիզ

Կիւրին. — Վեր. Գեորգ Տեմիրճեան

Մալաթիա. — Տ. Գրիգոր Բահ. Թաշճեան

Մարզուան. — Գեորգ կֆ. Կիւլեան

Նիկոսիոյի. — Վեր. Փառնակ Իսկեսեան

Ուրֆա. — Սողոմոն կֆ. Գնանեան

Պարտիզակ. — Լազարոս կֆ. Գանչեան

Պրուսա. — Մարթէն կֆ. Նիկողոսեան եւ Վեր. Եղիա Շամիկեան

Պէյրութ. — Մկրտիչ կֆ. Պողոսեան

Պիթլիս. — Խաչիկ կֆ. Վարդանեան


Ռօտտսթօ. — Միհրան կֆ. Գուգուսեան

Սամսոն. — Պողոս կֆ. Սիմոնեան

Սըվազ. — Մանուկ կֆ. Տիպերեան

Վան. — Խաչիկ կֆ. Լեւոնեան

Տիարպէքիր. — Յովհաննէս կֆ. Միքիկեան



# Ազգային, Գիտական, Գրական եւ Քաղաքական

ԻԳ, ՏԱՐԻ — ԹԻԻ 27

||

2 ՅՈՒԼԻՍ 1905

## ՐԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. ԲԻՒՐԱԿՆ Շարքաքերքի Տարեկան բաժնեգինն է Պոլսոյ եւ Գաւառներու համար 50 դրո., Արսասահմանի հասար' 5 բուլլի. կամ 12 ժրանք կամ 2 1/2 տոյր, թղթատուքեան ծախքը մեր վրայ:— 2. Ձեռնէ կը ծախուի հասք 10 փարայի:— 3. ԲԻՒՐԱԿՆ յի վերաբերեալ բաժանորդագին, համակ կամ ո եւ է զըտքին պէտք է ուղղել Կ. Պոլիս, Պոլսոյ Հաւուսի միջոցաւ՝ Ռոպերդ Գօլէն, Բրոժ. Յակոբոս Հ. Ճէնիզեանի. — 4. Անվանար համակ կամ գրութիւն չընդունուի. — 5. Տասը օրինակի բաժանորդ գտնողին մէկ օրինակի նուէր կը տուի :

## ԱՏԱԲԱԶԱՐ ԵՒ ՀԱՅՈՒՅԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ

### Ճ Ա Մ Բ Ո Ր Դ Ի Տ Պ Ա Ի Ո Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Բ.

Բայց վայրկեան մըն ալ մեր նայուածքը նեանք Հռոմէական հին յիշատակարանին մօտիկը գտնուած քարահանքին, այն ժայռուտ լեռան՝ որուն ընդերքը բացուած է քար հայթայթելու համար շինութեանց: Այդ ժայռերն էին անշուշտ որ հին կամուրջին խոշոր քարերը տուին, ատոնք էին նաև որ հինին քովիկը շինուած երկաթուղիի նոր կամուրջին քարերը տուին: Եւ արդարեւ ինչ են ալ հինը ու նորը այդ յաւերժական ժայռերուն քով: Մարզկային շէնքերու ամենէն հիներէն եգիպտական բուրգերն իսկ, որոնց վրայէն քառասուն դարեր վար կը նային անհուն անապատին վրայ, նորութիւն միայն կրնան սեպուիլ երկրաբանական այն հնազարեան խաւերուն քով, որոնց կազմութեան ատեն ոչ մարզկութիւնը գեռ

երեւան եկած էր երկրի վրայ, ոչ ալ արդի կենդանիները եւ բոյսերը աշխարհ եկած էին: Ահա բնութիւնը հոտ՝ ատոնց մէջ է, ամենէն հիներէն անհունապէս հին: Ու ես բազմած երեւակայութեան բոցեղէն թեւերուն վրայ, որոնց արագութեան հետ չի բաղդատուիր ոչ հովերունը, ոչ արագաչարժ շոգեկառքերունը եւ ոչ մինչեւ իսկ լոյսին հրաշալի արագութիւնը, կը փոխադրուիմ իսկոյն այդ ամենահին դարերուն մէջ, կը փոխադրուիմ մինչեւ հնագոյն դարը, ուր բովանդակ երկրագունտին միակ բնակիչը ու տէրը ամենանախնական ու ամենապարզ կազմութեամբ կենդանի մըն էր միայն: Աչքիս առջեւէն կ'անհետանտն արագ արագ բոլոր հին ու նոր մարզկային բնակավայրերը, մեծափառ շինուածքները, շքեղ քա-

ղաքները ու համայն մարդկութիւնը : Միայնակ կը կայնիմ երեւակայութեամբ, անհուն ու մթին անտառներուն մէջ, ուր ժամանակ մը կ'աճէին այն հսկայական ծառերը՝ այնքան անհուն առատութեամբ, այնպիսի զարմանալի ուռճացումով մը, որ ով զարմանալեացս, մեր յառաջացեալ դարուն շոգեկառքերուն, շոգենաւերուն ու ամէն շոգեշարժ մեքենաներուն հանքածուիը հայթայթելու զարմանալի միջոցը եղած են : Այսօր երբ վայրաշարժին հնոցպանը կը նետէ հնոցին մէջ հանքածուիսի խոշոր կտորները, և անոնք իսկոյն ահեղ ճարճատումով կը բոցավառին, միտքէն անգամ չանցրնէր թէ այն բոցերը հնագոյն դարերու մէջ, մարդուն գոյութենէն շատ առաջ, երկրին վրայ թափուած արեւին ճառագայթներն են, որոնք դարերով պահուած, քնացած այդ սեւաթոյր կոշտ բաներուն մէջ, այսօր հնոցպանին սեւ և աղտոտ ձեռքերով վերստին յարութիւն կ'առնեն, այնչափ դարերէ ետքը, արդի դարերու մարդոց ծառայելու, մղելու անոնց կառքերուն երկար շարքը երկրագունտիս այս նոր դաշտերուն, անտառներուն ու մերթ նաեւ բլուրներուն ու լեռներուն մէջէն, յառաջ վարելու անոնց խոշոր անագին նաւերը, կամ սոսկալիթխար ու հրէշային զրահաւորնէրը ովկիանու փրփրագէզ ու կատաղի ալիքներուն մէջէն : Օ՛հ, արդարեւ բնութիւնը զարմանալիքներուն զարմանալիքն է, եւ ով որ այս զարմանալիքներուն մէջ չկրնար տեսնել մեծ, անհուն, վարիչ Աստուածը՝ կոյրերուն կոյրն է եւ յիմարներուն յիմարը :

Ու պէտք է յիշենք թէ երբ կը խօսինք այս հազարաւոր, միլիոնաւոր տարիներու հնութիւնը ունեցող աշխարհին վրայ, մտքերնէս չանցընենք բնաւ թէ երեւակայական կամ ցնորական բան մըն է : Երբեք : Այդ հին աշխարհը իր բոլոր ազգի ազգի զարմանալի ու տարագայման կենդանիներով եւ բուսականութեամբ այնչափ իրական ու ճշմարիտ է, որքան է արդի աշխարհը իր բնակչութեամբ : Արդարեւ այդ հին աշ-

խարհի եղելութիւնները երբեմն պատմական աշխարհի եղելութիւններէն աւելի յստակ ու որոշակի կրնան կարգացուիլ ու տեսնուիլ : Այդ հին ժայռերը իրպէս նախկին արարչութեանց գետնադամբաններն են : Անոնք հոտ՝ այդ ժայռերուն մէջ աւելի ապահով պահուած են քան Փարաւոններու մումիաները եգիպտական հսկայ բուրգերուն մէջ : Եւ այսօր ուշադրութեամբ կը դիտեմ սալայատակը Հռոմէական հին կամուրջին : Բայց այս նախնական աշխարհի խոնարհ կենդանիներուն եւ բոյսերուն հետքերը, դրոշմուած կը կենան երկրիս խաւերուն մէջ, պատմելու մեզի թէ ինչեր եկեր գացեր են երկրային այս զարմանալի թատերարեմէն ու ի՞նչ դերեր կատարուեր են անոր վրայ : Մեր երկրագունտին տարբեր խաւերը հաւատարմաբար մեզի աւանդած են բոլոր անոնց հետքերը որոնք ատենօք կենդանացուցած էին անոր մակերեսոյթը : Բան մը կորսուած չէ այս մեծ թանգարանին մէջ : Երեւիագի կոչուած միջատը (մայիս պէտճէյի) իր շղարչէ թեւերով այնչափ լաւ պահպանուած է որչափ ըստնատամն կոչուած վաղեմի անագին փիլին ստուար կմախքը : Մանրացուցական փոքրիկ խեցեմորթին կեղեւը կը կենայ, քովիկը այն հսկայական կրիային ոսկրուտ սպտեանին, որուն նմանը մեր օրերուն մէջ չկայ : Գտնուած են նաեւ ծաղիկներ, ամենահին ծաղիկներ որոնք երկրագունտիս առաջին մարգագետինները լեցուցին իրենց անուշաբոյր հոտով : Ասոնք երկրիս խաւերուն մէջ պահուած կը մնան, եթէ ոչ իրենց բոլոր թարմութեամբ, գոնէ պահելով իրենց ձեւերուն բոլոր փափուութիւնը : Երկրաբանը հազարաւոր դարերառաջ ապրող խոնարհ կրիաներու կամ քանի մը առանձնացեալ մողէսներու քայլերուն հետքերը կը նշմարէ, զորս անոնք դրոշմած են հողին վրայ, մեր երկրագունտին ամէնէն հին ժամանակներուն մէջ : Աւելի զարմանալին կայ՝ ո՞վ մտքէն կ'անցրնէ թէ կրնանք գտնել մինչեւ իսկ այն փոթորիկներուն նշանները որոնք գոռացին երկրիս վրայ մեր աշխարհի ամէ-

նէն հին ժամանակներուն մէջ: Երկրաբանը այսօր իսկապէս կը տեսնէ դրոշմուած նշանները անծրեւի այն խոշոր կաթիլներուն որոնք հին դարերու մէջ ինկան աւազին վրայ, որ հաւատարմօքար պահեց զանոնք ետքը հաստատուն որձաքարի փոխելով:

Այս մտածումները եկան մեզի՝ շատ բնական շարքով մը, չղթայի մը իրարու կցուած օղակներուն պէս, երբ կը նայէինք հին կամուրջին անբարբառ եւ համը քարերուն վրայ զորս հոն մարդկային ձեռքեր զետեղեր էին, ու երբ դարձուցինք աչքերնիս այն մօտակայ քարահանքին վրայ որ ի տես կը բերէր երկրաբանական հին խաւերը որոնք եւ որոնց նմանները այնքան բան խօսած, այնքան պատուութիւն ըրած են ամենահին ժամանակներու վրայ: Շատ բնական մտածում մը չէ՞ր այս. բայց ատոր յաջորդեց իսկոյն ուրիշ մտածում մը: Յիշեցի այն անջնջելի տպաւորութիւնները զորս մեք կը թողունք բարոյական աշխարհին վրայ, տպաւորութիւններ որոնք կ'ունենան իրենց բարի կամ յոռի հետեւանքներու շարքը: Բարոյական աշխարհը՝ կարծես բնական աշխարհէն աւելի հաւատարմաբար կը պահէ հետքը մարդկային բարոյական գործոց: Եւ այս՝ անաւոր մտածում է անոնց համար որոնք միայն ոչ-յիշատակելի հետքեր կը թողուն աշխարհի վրայ, եւ անհունապէս խրախուսիչ եւ քաջալերական է անոնց՝ որ ինքզինքնին նուիրած են ծառայելու Աստուծոյ եւ մարդկութեան: Հազարաւոր միլիոնաւոր դարերը կարող չեն ջնջել անոնց աշխատութեանց հետքը: Միտքս եկաւ պատմութիւն մը զոր վերջերս կարգացեր էի Բրոֆ. Հիլփրէյթի նշանաւոր հնախօսը, Նիփուրի աւերակներէն գտեր էր պնակիտ մը եւ դրեր Փէնսիլվանիոյ համալսարանին թանգարանին մէջ: Սոյն պնակիտին վրայ հետեւեալ բացատրութիւնը տրուեցաւ այցելուի մը որ կը գիտէր զայն: Ասոր վրայ հին սեպածեւ գիրերով գրուած էր պայմանագ-

րութիւն մը՝ զոր մասնագէտները շատ զուրութեամբ կրնային կարդալ: Թերևս Աբրահամի ժամանակէն աւելի հին էր այն: Պայմանագրութիւնը ճշգրտօրէն եւ օրինաւոր կերպով արձանագրուած էր, եւ վկաներ ալ տրուած էին անոր ստորոտը: «Տեսէք, ըսաւ մասնագէտը այցելուին, վկաներէն մէկը գրել չէր գիտեր, ուստի գիրի տեղ իր բլթամատին ըզունգը կոխեց պնակիտին կակուղ նիւթին վրայ, ու մէկն ալ անոր ետեւէն գրեր էր թէ ասիկա մարդուն ճշմարիտ վկայութիւնն էր»: Վկան անցեր գացեր էր, սերունդներ սերունդներու յաջորդեր էին, բայց տակաւին մնացեր կեցեր էր այդ անծանօթ մարդուն տգիտութեան հետքը. եւ ո՞վ զիտէ քանի դարեր ալ պիտի մնայ գիտութեան այդ հոյակապ թանգարանին մէջ: Մտածութեան ինչ արժանաւոր նիւթ մեզի մարդոցս համար որ մեր տգիտութեան կամ գիտութեան, բարութեան կամ յոռի բարքերուն հետքերը մշտնջենապէս պահուած պիտի ունենանք:

ՅԱԿՈՒՌՈՍ Հ. ՃԷՃԻՋԵԱՆ

Կեսարիոյ Ս. Կարապետի վարժարանը, որ գաւառական կրթական կարեւոր բարձրագոյն հաստատութիւն մըն է, այս տարի ունեցած է 9 շրջանաւարտներ, որոնք են. Պարոնայք՝ Վահան Իսպէչէրեան (Կեսարացի), Սեդրակ Յարգուարթեան (Կիւրինցի), Կարապետ Պաշիկեան (Կէրմիրցի), Մկրտիչ Դաւթեան (Կէրմիրցի), Գալուստ Մինասեան (Կեսարացի), Յարութիւն Ապահեան (Կիւրինցի), Յարութիւն Հաճնիկեան (Կեսարացի), Յակոբ Վենետիկեան (Մերսինցի) եւ Յակոբ Իսպէնչեան (Կեսարացի):



## “ԲԻԻՐԱԿՆ,,Ի ԵՐԿՐՈՐԴ ՎԵՑԱՄՍԵԱՆ

ԲԻԻՐԱԿՆԻ այս թիւով՝ կը թեւակոխենք ներկայ Տարեշրջանի Երկրորդ Վեցամսեային մէջ, որուն պատեհութեամբ առիթը կը ներկայանայ մեզ՝ ընթերցողներուն քանի՜ մը խօսք ուղղելու: Երկար յայտարարութեան մը չենք կարօտիր՝ պարզելու համար նշանակութիւնը և արժանիքը լրագրական այս ձեռնարկին, զոր կը շարունակենք երկար տարիներէ ի վեր անխոտոր ու անսայթաք, առանց ընդհատումի կամ ուղղութեան փոփոխութեան: Նախընթաց Շրջաններու վրայ ակնարկ մը՝ կը բաւէ վեր հանելու համար լրագրական այն նպատակը և ուղղութիւնը՝ որոնց իրականացման հետապնդումին կ'ուղղուին մեր ջանքերը, օ՛ր օրի առաջացնելով և կատարելագործելով թերթը, ճոխացնելով ու զարգացնելով անոր բովանդակութիւնը: Մեր այդ ուղղութեան մէջ՝ գլխաւոր մտասեւեռում մը եղաւ միշտ՝ ընթերցողներուն տալ անսասնադադար ու կրօնական գրուածքներ, և ամէն ի՛նչ բան որ՝ կրօնական է, կը բարձրանայ, գաղափարական մը՝ զոր իրագործուած պիտի տեսնեն ամէն անոնք՝ որոնք հետեւած են լրագրական այս գործին: Միշտ ընթերցողներուն օգուտը եւ շահը աչքի առջեւ ունենալով՝ մենք չընկրկեցանք որ և է զոհողութեան առջեւ, եւ ճոխացնելու համար պարունակութիւնը ԲԻԻՐԱԿՆԻՆ, զայն երեք տարիէ ի վեր անփոփոխ կերպով կը հրատարակենք ասն էլով, որով ան կը հանդիսանայ մէկը Պոլսոյ Հայ պարբերականներուն ամենէն բարձրին, ու ճոխին, մանաւանդ իր տպագրական սեղմ ու խտացուած վիճակով:

Այսչափ մը հարեւանցի դիտողութիւն և ուրիշ պարագաներ, — որոնց ընթերցողները դիւրաւ կրնան անդրադառնալ, ուշագիւր ակնարկ մը սեւեռելով ԲԻԻՐԱԿՆԻ բովանդակութեանը ու ամէն շարթուան էջերուն վրայ, — ապացոյցներ են թէ՛ ի՛նչ սկզբունքներ և մտահոգութիւններ են որ կ'առաջնորդեն մեզ՝ մեր լրագրական գործին մէջ:

Սակայն կը ցաւինք ըսելու որ, հարկին տակ կը գտնուինք դիտել տալութեւ, ընթերցողներէ մաս մը կը թերանայ արժանի քաջալերութեամբ փոխարինելու այս ջանքերն ու զոհողութիւնները, միշտ դանդաղելով բաժանորդագիրներու վճարման մէջ, պարագայ մը՝ զոր ցաւով կը շեշտենք շարունակ և կրկնելու ստիպողականութիւնը կը զգաք, ինչպէս ուրիշ առիթներով, նոյնպէս այս անգամ: Գաւառական բաժանորդներէ ոմանց բաժնեգիրները ցարք անվճար կը մնան, եւ նոյնպէս, գործակալներէ ոմանք դեռ հասցուցած չեն մեզ՝ իրենց հաշիւը: Մենք՝ հակառակ մեր կամքին և ցաւով է որ կը հարկադրուինք դիտել տալ այս պարագան և կրկնել զայն. սակայն լռութիւնը և սպասումը որչափ կ'ընեն երկարիւ երբ ոմանք միշտ տարիին կէս տեղր անվճար կը թողուն իրենց հաշիւը: Մենք չենք կրնար մեկնել թէ, բաժանորդներէ ոմանք ինչու կը սիրեն այսչափ ձգձգել թերթի մը համեստ փոխարժէքը և ստիպել խմբագրութիւնը՝ որ ակամայ այս դիտողութիւններուն դիմէ: Տարեգրութեան մինչեւ մէկ-երկու ամսուան ժամանակամիջոցին՝ թերթին առաքումը այդ կարգի

հասցէներու՝ պատիւ մը չը՝ կրնար ըլլալ՝ իրենց անունին ու անձին վրայ եղած վատահոլութեամբ՝ որ անկէ ա՛գիւն ալ փոխութիւն գտնուիլ չեն ու՛զեր ու ա՛յսչափ կը յապաղեցնեն իրենց չնչին մէկ վճարումը՝ իբր փոխարժէքը ահողջ տարուան մը իրենց թերթին, որ կանոնաւորաբար կը զրկուի իրենց՝ ամէն շաբթու, նիւթա՛յան ամէն զոհողութիւններու յանձնառութեամբ :

Մենք այս տողերը կը գրենք բոլորովին մտերմօրէն՝ շեշտելու համար թէ, ինչպէս Խմբագրութիւն մը, նոյնպէս բաժանորդներ՝ ունին պարտականութիւններ, զորս պէտք է գիտնան յարգել, երբ Խմբագրութիւնը ա՛յնչափ պատրաստակամ կը գտնուի իր ընթերցողներուն շահին ու օգտին ծառայելու, չխնայելով ո՛չ մէկ ջանք, և յանձն առնելով ամէն զոհողութիւն :

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

**Պ Ա Ս Տ Ի Կ Ե Ա Ն Ե**

Կատարեմաբար մեզ :  
Յափեսակութեան պահն է դիւրական :  
Հարեան գիւղերէն՝  
Ձայնն ալ չի գար ահաղաղներուն :  
Ո՛չ մէկ ժխտ, յոգնած կեանքէն Մարդկութեան :  
Ու բնական գեղեցկութեան,  
Աննաւելի արուեստին,  
Պարզ ու վսեմ, \* անհմա՛ն,  
Հրաւակիրներն են դուրս ցցուած,  
Կուրճէն հողին համայնածին :  
Իսկ յագուարք կտաւին վրայ,  
Երկիւններուն մշակայ,  
Ճառագայթներն արեւին,  
Կուրսն վրձնել գոյներու,  
Նկարչութիւնն անսահման :  
Բոսոր, կարմիր, շառագոյն,  
Արծաթ, շուշան ու սասափ,  
Ներկուած են ամպերն համակ,  
Ամպերն անմեղ, զարապարհակ,  
Դանդաղ նամբող՝ Անեղութեան :  
Այլն ալ անհուն կը ժայթ,  
Վառ, խոհուն ցոլներով,  
Պատգամաբեր,  
Անվեհեր,  
Լուսաւորին սուրնջեան :

Մայր-թոշուցներ երբեք մեզ կը նախեն.  
Ու սաք գիրկէն բոյներուն,  
Մերկ ձագուկներ կը նրան,  
Լացը Նօթին, Մենութեան :

Ոսթիկներէն ծառերուն,  
Ու խոտերուն քելերէն,  
Շաղն առտուան կը ցնդի,  
Գաղջ համբոյրէն ցորեկուան :

Մայլին լծուած գոմէներուն վիզէն կախ,  
Բոժոժներն ալ կ'երգեն իրենց պելուն.  
Ու մշակներն անխարդախ,  
Կը բանան բերանին՝ աղօթով զեղուն :

Եղնիկ մը,  
Որ կաթ կուտայ զաւկին անօթի,  
Հողսգործին անցէն յեղակարծ,  
Կը փախչի յանկարծ.  
Մինչ նապաստակ մը, հեռուն,  
Դեռ կը բնանայ,  
Աչքերը բաց, անգիտակ,  
Վախին անոր, որ հրաւէլ՝  
Գնձակն ունի Մահացման :

Հունձք կայ հոն :  
Մանգաղներուն կը փայլի շեղքն հողին մօտ .  
Բերք, առաս, կը փռուի,  
Գետնին վրայ, ու յետոյ,  
Որայ կ'ըլլայ,  
Կ'ըլլայ նաեւ խուրձ ու դեղ :

Ու հօտն այ,  
 Որ դեպի դաւոս. դեպի Սնունդ,  
 Ճամբայ ինկած է, շաս կանուխ, այգուն,  
 Լուսն է կեանքին,  
 Դաւոսե՛րու կեանքին,  
 Ուրկէ ներեցնուած,  
 Քերթող մը գեղջուկ.  
 Պիտի լարէր իր՝ թելերը սաւիղիին,  
 Երգելու համար,  
 Յուզելու համար,  
 Անհոգ, երջանիկ զաւակներն հողին :


ՏԻԳՐԱՆ ԳԱՍԱՊԵԱՆ

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Բաժանորդներէ անոնց՝ որոնք ԲԻԻ-  
 ՐԱԿՆԻ զանազան թիւեր յանձնարա-  
 րած են, կը տեղեկացնենք որ՝ թերթիս  
 ցուիչ եւ թղթատարական առաքիչ  
 պատճառներով անհետ կ'անցնեն՝ ու-  
 ռով չկրցաւ զբաղիլ թիւերու ընտրու-  
 թեամբ, պատճառ եղաւ անոնց մէկ  
 քանի շաբաթ յապաղման: Բայց մօտա-  
 ւորապէս պիտի ստանան անվերջ :

Տիրար Յովհ. Ալիքսանեան (Ասաբազար).  
 —Ծանուցումը վերջին պահուում միայն հա-  
 սած ըլլալով մեզ, յառաջիկայ թիւով պիտի  
 կրնանք հրատարակել :

Վեր. Փ. Իսքէնտէրեան (Նիկոմիդիա). —  
 Բաժանորդներու մասին Ձեր յանձնարարու-  
 թիւները կը կատարուին: Ձարեհ է՞ք. Գա-  
 վէջեանի հասցէին փոփոխութիւնը կատար-  
 ուած է արդէն, եւ երեք շաբաթ է որ, յանձ-  
 նարարուած հասցէով կը զրկուի :



Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Ձեռքերը ծալլած՝ երկար ատեն զխիկոր  
 երազել, երազել յազնա՞ծ, տխուր, ձանձ-  
 րացած եւ բարբախուն, սպասումի տենչե-  
 րով, ապա քակել զանոնք, անհունն ի վեր  
 կարկանդակ, ու սպասել դարձեալ զխիկոր,  
 յոգնած, տխուր ձանձրացած եւ բարբախուն,  
 սպասումի տենչերով. . .

Յանկարծ, կիսարաց պատուհանէ մը կը  
 լսէք ջութակի մը լալկան, հիւանդ շեշտերը,  
 սրունք կը համապատասխանեն ձեր սպասու-  
 ներուն, որոնք կուլան ձեզի պէս նուազկոտ  
 ու հատած. . . ապա նախերգանքը կը վերսկսի.  
 ձայն մըն ալ կը խառնուի անոր մեղմօրէն,  
 թոյլ տրտմութիւն մը կը զգայ, որ սակայն  
 լուսագոյն հանգիստն է տառապող հոգիին  
 համար. կ'ունկնդրէք անոր, գրեթէ թալ-  
 կացած, զգալով եւ հատնելով գերագոյն  
 զգայնութեան մը ներշնչուններուն մէջ. . .

Ծովեզրն ի վեր լոյս ժպիտով տղայ մը  
 կը յառաջանայ յամրաբար, հազիւ քսան  
 տարեկան: Ջղաճիգ ու անհանգիստ կերե-  
 ւայ: Մեղմադձոտ Նէման է այդ աղուոր  
 տղան, որ մեղեգրիին կ'ունկնդրէ, գուցէ  
 գտնելու համար բուժումը իր վիշտերուն,  
 սպասումի անձկուտ այս վայրկեաններուն  
 մէջ:

Բայց, ի զո՛ւր, սիրելին՝ զոր անգամ  
 մը միայն տեսաւ, չերեւար չերեւար բնա՛ւ:  
 Զգացումի հետապնդումովը յամառ, կաշ-  
 կանդուած անձանտօթի գերող հմայքներէն,  
 նոյն անհամբեր շարժումները կը կրկնէր,  
 տարտամ երեւակայութեամբ մը գիծով-  
 ցած :

Վայրկենապէս յղացուած երկու միջոց  
 կայ ա՛լ հանգիստ ըլլալու, մտոնալ զայն և  
 լալ նուագի անոյշ ողբերով, կամ մտոնալ  
 կեանքը, ծովուն կանանչ կոհակներուն  
 մէջ. . . ո՞րը երկուքէն. . .

\* \*

Արուեստագէտի նուրբ ճաշակը լիապէս  
 յազնցած էր անկէ, այն նուրբ ու ճապուկ  
 հասակէն որ օրօրուելով կը շրջագայէր այդ



իրիկուն ծովափին մօտ, ճերմակ նաւակէ մը զօրս ելած... Արեւելեան երանգապնակի մը ամօղը վառ համադրութիւնը պարպուած էր վրան եւ պաշտելի կապոյտ մը լճացած էր թաց աչքերուն ետին: Հովէն գողցուած նուրբ շղարչն ալ անոր մերկութեան անդիմադրելի հմայքը կը ցուցադրէր, որուն առջեւ նկարիչը դողաց, եւ զայն սիրելու պէս հիւանդ ըլլալ գգաց:

Անիմանալի զօրութիւն մը դէպ ի առաջ մղեց գինքը, վայելելու համար երանութիւնը երկինքէն զրկուած այդ հուրիին, բայց քայլերը կեցան. կրակ մը կ'այրէր իր սիրտը ու խտրոյց մը ոտքերը...

Մովը նոյն պահուն չէր շառաչեր, հովը նոյն ատեն չէր շնչեր, երկինքը նոյն պահուն գոյն չունէր. այսպէս երեւցաւ Նէմային, որ լուսային աշխարհ մը փոխադրուած ըլլալ կը գգար, ուր կը թաղուէր ճառագայթներու իրար անցած ծիրանի ցոլքերուն մէջ...

Այդ բարակ մարմինէն կը ծորէր ա՛յդքան շնորհ ու գեղ, ա՛յդքան կախարհանք... երկնային կեանքի շօշափելի մէկ պատկերն էր անիկա, զոր երբեք կրցած ըլլայ յղանալ բանաստեղծին երեւակայութիւնը. իր ամէնէն վառ թափանցումներուն մէջ իսկ: Սակայն ասուպի մը կեանքը ունեցաւ անոր երեւումը, ամէն գեղեցիկ բաներու պէս. ճերմակ նաւակը քիչ տարաւ զայն եղերքէն, ու նկարիչը մնաց հոն սխուր, թեւերը ծալած, մինչեւ որ հորիզոնէն անդին անհետ եղաւ ան:

Ո՛չ մէկ ծալք կը գծուէր դէմքին վրայ. աչքերը կիսախուր, իրենց երկար ու վեր զարձած թարթիչներուն մէջէն նայուածքի նուազում մը կը սահեցնէին: Ատիկա քաղցրութիւն մըն էր համակ, իր կարմիր բերանը, գոց կը մնար կոկոնի մը պէս, չկըրնալով բողբոջել թէ իրեն թեւեր ինչու չէր տրուած...:

Իրիկնապահը սքանչելի էր, արեւմուտքը ոսկեզօծուած. երկինքէն սիրուն երամներ կը սահէին, ջուրին մէջ վտառներ. լոյսը

միջոցին մէջ կ'ոգեւարէր. խարակներուն ցիւց գլուխները ժպիտ մը ունէին. ատիկա գերքի մէջ ամէն իր կը խնդար հանգչա՛ծ. միայն նկարիչը հանգիստ չունէր եւ կուլար ձեռքերը ծալած երկար ատեն, զլխիկոր, սպասումի տենդերով...:

Վերադարձը անտանելի եղաւ:

\* \*

Նկարիչը ուսանող մըն էր դեռ. ու յաջորդ առտուան համար մրցում կար իր ընկերներուն հետ, լաւագոյն պատկերը հեղինակողին փայլուն ապագայի մը խոստումով: Աւա՛ղ, որ ծովափին գոհած էր իր ժամանակէն մեծ մաս մը. յաջորդ օրը ձեռնունայն պիտի մնար դպրոցին մէջ. հազիւ քանի մը արագաստ ժամեր կային եւ դեռ իր շինելիք նկարին մօտատիպարը անգամ չունէր: Տաք զլխով մը յանկարծ այս բանը մտածեց. երանգապնակը ձեռք առաւ, յետոյ մատները անոր վրայ գտնուած ներկերուն հետ խաղացին, տեսակ մը շղաճգութեամբ: Երանգներուն մէջ հալած, հանգրիծուած շղարչներու պէս փափուկ, իր ամբողջ երեւակայութիւնն էր ատիկա, իր սէրը թերեւս, նաւակին ազլիկը կեանք առած էր երանգապնակին վրայ, գոյներու ներդաշնակ իրարանցումներուն մէջէն, ա՛յնքան ազուոր...:

Ու, տառապանքի, յուսահատութեան մէկ պահը՝ ներշնչումի գերազանցող գլուխագործոց մը ստեղծեց...:

ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌՔ

Ն Ո Ր Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ի Թ Ի Խ Ն

Ն. Կ. Պէրպէրեան և Որդի Տպարանէն՝ լոյս տեսած է Հին և Նոր Կտակարաններու կրօնի ուսման համար՝ միջին ընթացքի հատոր մը, Նոր Ուխտի, հեղինակութեամբ Տ. Վարդան Քաչ. Արսլանեանի: Գիրքը զարդարուած նկարներով՝ որոնք աւելի հաճելի ու հասկնալի կ'ընծայեն անոր բովանդակութիւնը ուսանողներուն: Կեդրոնատեղին է Պէրպէրեան Տպարան, և գինը 3 դրչ.:

# ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԱՐԱՆԸ ՄՐԲԱԶԱՆ ՀԱՏՈՐԻՆ ՄԷՉ

Կ Ա Մ

## Ս Ա Ղ Մ Ո Ս Ն Ե Ր Ը

### Ե. — Գ Ո Ր Ծ Ա Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Երբ Դաւիթ՝ «Թորայէլի վայելուչ երգե-  
րը շարադրողը»՝ առաջին անգամ հոգիին  
ազգեցութեանը տակ ձեռք առաւ իր բա-  
նաստեղծի գրիչը ու գրեց սաղմոսներ, ա-  
նոնց մէջ պարուրելով իր երեւակայութեան  
հուրքը և իր զգայուն սիրտին գեղատն զգա-  
ցունները, այն օրէն սկսաւ անոնց գործա-  
ծութիւնը ժողովուրդին կողմէ: Յաւիտե-  
նական Աստուծոյ պաշտամունքին աւելի  
փայլ տալու համար կազմուած նուագածու-  
ներու խումբեր իրենց այլազան նուագնե-  
րու բամբ ձայնովը մինչ Եհովային փառա-  
ւոր տունը կը լեցնէին, երգեցիկ խումբեր  
սակայն չէին դադրեր իրենց սերթ մեղմ և  
մեղանոյշ, իսկ մերթ գոռ և զուարթ եղա-  
նակներովը երգելու, հոգեշունչ հեղինակ-  
ներու գրիչէն ելած սաղմոս երգերը, եր-  
կար դարեր:

Երանի՛ թէ կտրելի ըլլար անգամ մը  
սլանալ գէպ ի հտ ու մանել հեռաւոր անց-  
եալին ծոցին մէջ, լսելու համար այն հոգևոր  
քաղցր ձայները որոնք հնչած են Սիօնի  
դաշտերէն, ու այն տխուր մեղեդիները՝ ու-  
րոնք լալկան կեանքերու երգերը եղած են  
սուրբ երկրին մէջ: Սաղմոսները՝ երկար դա-  
րերու շրջանին մէջ, Պաղեստինի ներշնչա-  
կան վայրերուն ծոցը քանի՛ քանիներու հո-  
գեկան զգացուններուն փափուկ թելերուն  
դպած են մեղմիկ, ու քանի՛ քանիները  
նետած են կրօնական խորհուրդներու ան-  
սահման ովկէանին մէջ. անոնք քանի՛  
քանիները յուզած, անոնց աչքերէն արտա-  
սուրբ կաթիլներ կորզած են, և քանի՛ քա-  
նիներու ալ շրթունքներուն վրայ թրթռա-  
ցած են, ըլլալով անոնց խորհուրդներուն

ու զգացուններուն բուն իսկ թարգմանը:

Պէտք չկայ ըսելու թէ սաղմոսները միայն  
տաճարի պաշտամունքին ատեն երգուելու  
համար յատկացուած և միայն քահանա-  
ներու և Ղեւտացի դասակարգին կողմէ  
գործածուելու համար պատրաստուած չեն.  
անոնք մտած են ժողովուրդին ամէն դասա-  
կարգերուն մէջ, մտած են՝ իշխանական փա-  
ռաշուք ապարանքներէ ներս և խօսած են  
վայելքներու քնքուչ գիրկին մէջ հանգչող  
երջանիկ կեանքերու. մտած են պարզուկ  
կիսափուլ խրճիթներու դռներէն ներս ու  
խօսած են կարօտութեան չոր գիրկին մէջ  
ապրող կեանքի գժբաղղ զաւակներուն: Ա-  
նոնք եղած են երգերը ուրախ և զուարթ  
օրերու մէջ գոհունակ ու երախտագէտ հո-  
գիներու, ու եղած են երգերը հոգե-  
կան տխուր ժամերու մէջ յուզուած  
սիրտերու ու փրփրած զգացուններու:  
Հրեայ ժողովուրդը գրեթէ գոց սորված  
էր իր հոգեւոր երգարանին իւրաքան-  
չիւրը երգը, ու կը կրկնէր զայն քար-  
մար ատենին: Ի՞նչ վսեմ էր այն տեսա-  
բանը երբ Պաղեստինի հեռաւոր ծայրերէն,  
տօնի ատեն, Երուսաղէմ խուժող խումբե-  
րամ բազմութիւնը այրերու և կիներու, իր  
ձայնը բարձրացուցած՝ կ'երգէր քաղցրա-  
ձայն՝ Աստիճաններու երգերը (Սաղմ. ՃԻ. —  
ՃԼԴ) մինչ ծանրաբայլ կը մօտենար Սուրբ  
քաղաքին պարիսպներուն, և ո՞րչափ անուշ  
ու հաճելի էր լսել անոր հսկայ պարիսպնե-  
րէն ներս, քաղաքին ամէն անկիւններէն, և  
մասնաւոր տաճարին սրահներէն, վեր բարձ-  
րացող գոռ ձայները երգի, որոնք իրենց

հետ կը բերէին քաղցրալուր «Ուսանան»ն և «Օրհնեալ է ան որ Տէրօջը անունովը կուգայն, վասն զի ժողովուրդը ուրախութեան ձայն բարձրացուցած կ'երգէր ՃԺԵ—ՃԺԸ սաղմոսները :

Այս պատուական սաղմոսները սակայն՝ միայն Հրեայ ժողովուրդին գործածական երգերը եղած չեն. անոնք միայն տաճարի նուիրական սրահներուն մէջ հնչած չեն : Քրիստոսի եկեղեցին առաջին օրէն իսկ վարանած չէ սաղմոսներու այդ գոհար կտորները իր պաշտամունքներուն մէջ մտցնելու եւ զանոնք իր ընտանեկան սուրբ յարկերէն ներս առնելով անոնց իրստ պատուական տեղ մը տալու : Քրիստոնեաներ խիստ կանուխ սովորութիւնը ունէին ամբողջ գիրքը գոց սորվելու, որպէս զի սաղմոս երգերը «իրենց ընկերականութեան ժամերը ոգեւորէին եւ յոգնութիւնները թեթեւցնէին ու կեանքի տխրութիւնները մեղմացնէին» : Աղեքսանդրացի՝ Կղեմենդի վկայութեանը համեմատ, սաղմոսները կը գործածուէին ճաշի ատեն ու պահելէ առաջ ալ : Այսպէս ամբողջ երկար դարեր սաղմոսները երգերը եղած են հալածական քրիստոնեաներու, եւ երգուած են լեռներու խոռոչներուն ու անձաներու մէջ, երգուած են ստորերկրեայ վայրերու մթութեանը եւ խոնաւութեանը և կրակի լափող բոցերուն մէջ : Անոնցմէ շատեր միջին դարերու մթութեան ու թանձր խաւարին մէջ միտիթարական ու քաջալեւրական երգերը եղած են Թուրուզի նահանգին խեղճ հալածեալներուն՝ Ալպիկեաններուն, Վօտուայի անտառախիտ վայրերուն դժբաղդ զաւակներուն՝ Վալտենոններուն, ինչպէս նաև Մորավիոյ խորերուն մէջ պլպլացող լոյսերուն :

Բարեկարգութեան դարով սաղմոսներու գործածութիւնը նոր ոգեւորութիւն մը առաւ. անոնցմէ շատեր այլ եւ այլ լեզուներու թարգմանուելով, անոնց չափաւոր ու յանկաւոր ձեւ մը տրուելով, մտցուեցան նորակազմ հոգեշունչ երգերու զոդտրիկ հա-

տորներուն մէջ, զորս արձագանգել սկսան եկեղեցիներու երկնամբարձ գմբեթները : Արդարեւ Գերմանիա շատ բան կը պարտի Հուտերի եւ Պօլսու Կերհարդի, որոնք իրենց բանաստեղծի հանճարով՝ մեծ զարկ տուին եկեղեցական երգերու, որոնց մէջ կը փայլին սաղմոս-երգերը. իսկ Ֆրանսա կղեմենդ Մարոդի, Անգլիա՝ Մայրը Գովըրտալի, Թովմաս Սթրենհոլտի եւ Ճօն Հոբբինգի, Կալլէսի փոքրիկ երկիրն ալ՝ Ուիլեմ Մայտրիթրնի, որոնք իրենց կարգին մեծ ծառայութիւններ մատուցին, սաղմոսները՝ անհասկնալի լեզուներու գիրկէն խլելով ու ժողովուրդին մօտ բերելով. «Քրիստոնեաներ» քանի երգեն, իրենց հոգեւոր երգարաններուն մէջ զետեղուած սաղմոսները՝ միշտ պիտի յիշեն անցեալին այդ անձնուէր աշխատաւորները :

\* \* \*

Երգարաններ ու հոգեւոր երգեր կան՝ որոնք իրենց դարուն մէջ երգուելէ վերջ սփսած են գործածական ըլլալէ դադրել, տեղի տալով իրենց յաջորդող նորերուն, որոնք եկած են ժամանակին պահանջներուն աւելի լաւ գոհացում տալ : Բայց սրբազան հատորին Հոգեւոր Երգարանը, իր պարունակած երգերովը, որոնք նոյն ատեն աղօթքներ են հոգեբուղիս, ա՛նէն դարերու գործածական գիրքը եղած է. ան ժամանակին հետ չհինար, վասն զի իր խորհուրդները ամէն դարու պէտքին ու պահանջին կը համապատասխանեն. ան ժամանակին հետ կը նորոգուի ու անոր հետ կը յառաջդիմէ, այնպէս որ ներկային մէջ ապրող ու եւ է մէկը կրնայ օգտուիլ սաղմոսներէն այնքան՝ որքան անցեալին մէջ օգտուած են մարդիկ, եւ աւելի ալ : Սաղմոսները իրենց մէջ կը պարունակեն տակաւին թարմ խորհուրդներ եւ զգացումներ, որոնք հետախոյզ միտքերու եւ խորաթափանց հոգիներու կը կարօտին երեւան հանուելու համար : Ուրեմն աւելի սերտիւ փարինք սաղմոսներուն եւ զանոնք

մեր ամենօրեայ ընթերցանութեան գիրքը ընենք :

Կարգա՛նք զանոնք, եթէ հետաքրքիր ենք Աստուածարանական խնդիրներու, եւ անոնց մէջ պիտի գտնենք Աստուածայայտնութիւնը, անոնց մէջ պիտի գտնենք իրենց պատկանած գարուն կրօնական ըմբռնումները, հարկաւ այն ժողովուրդին՝ որուն գրական արտադրութիւնները կը ներկայանան անոնք. անոնց մէջ պիտի տեսնենք Աստուծոյ նախախնամութիւնը ու անոր Սէրը, որ այնքան յստակ կերպով կը փայլի սաղմոսերգութիւն բառերուն մէջ. անոնց մէջ պիտի տեսնենք զԱստուած իր սրբութեանը մէջ, ու մարդը իր մեղքի ազտեղութեանը ու ապականութեանը մէջ, որ ձայն կը բարձրացնէ ոգորմութեան եւ գթութեան համար դէպի սրբութեան աթոռը, եւ անոնց մէջ պիտի տեսնենք Եհովան իր մեծութեանը ու փառքին մէջ, իսկ մարդո՛ իր իսկական աննշանութեանը ու ոչնչութեանը մէջ. հոն է որ մարդը կ'ազազակէ ըսելով. «Մարդ ի՞նչ է որ գանիկայ կը յիշես, կամ մարդու որդին, որ անոր այցելութիւն կ'ընես» (Սաղմ. Ը. 4.) : «Ահա՛ իմ օրերս թիզի մը չափ զըրիր, ու իմ կեանքս ոչինչի պէս է քու առջիդ. իրաւ ամէն մարդ թէեւ հաստատուած ըլլայ, բայց բոլորովին ունայնութիւն է» (Սաղմ. ԼԹ. 5) : Վասիլի սաքանի մը տողերը բաւական են ցոյց տալու թէ հետախոյզ միտքերու համար սաղմոսները ինչե՛ր կը վերբերեն. «Անոր մէջ կատարեալ Աստուածաբանութիւն մը կը գտնուի. Մարդեղութեան նկատմամբ մարգարէութիւն, գատաստանի սարսափ, յարութեան յոյս, պատիժի վախ, փառքի խոս ուում, հոգևոր զաղտնիքներու յայտնութիւն. ասոնք ամէնը Սաղմոսաց գիրքին մէջ ծրարուած են իբր թէ մեծ ու հասարակաց շտեմարանի մը մէջ» :

Կարգա՛նք սաղմոսները՝ եթէ կարօտութեան մէջ ենք, ու անոնք մեր շրթունքներուն վրայ դէպ ի գթութեան օթեւանը բարձրացող աղօթքի մրմունջներ պիտի ըլ-

լան. կարգա՛նք զանոնք՝ եթէ անխիւ ու անհամար բարիքներէ չըջապատուած գոհունակ վիճակի մը մէջ կը գտնուինք. ահա՛ անոնք մեր երախտագէտ հօգիին շնորհակալութեան աղօթքները պիտի ըլլան. «Օրհնէ՛ Տէրը, ով իմ անձս, եւ Անոր բոլոր բարերարութիւնները մի մոռնար» (Սաղմ. ԺԳ. 2.) :

Ու կարգա՛նք սաղմոսները մեր աստեղոր կեանքին սա կարճ օրերուն մէջ. ընելով զանոնք մեր սիրական երգերը, ու այդ երգերուն ազդեցութեանը տակ՝ մեր հօգեւոր դառնութիւններուն մէջ մխիթարութիւն, մեր կամքի ցաւերուն մէջ սփոփանք ու մեր աշխարհիկ յուսահատութիւններուն մէջ քաջալերութիւն պիտի գտնենք. ո՛վ արդեօք ինքզինքը տառապալից աշխարհէն երջանկութեան ու ապահովութեան վայրը նետուած չգտներ, երբ ձեռք կ'առնէ ու կ'երգէ ԻԳ.րգ սաղմոսը.

«Ինձ Տէրը եղաւ հովիւ կառավար,  
եւ բա՛նի մը ես կարօս չեմ ըլլար.  
Օրեր անվախման դաւեսերն խոսուե՛ս,  
Պիտի նարակիմ ընտրեալ հոսիդ հե՛ս» :


Երանի՛ թէ մեր Հոգեւոր Երգարաններու մէջ եղածէն աւելի յուս գտնէին Սրբազան հատորին այս գոհար երգերէն :

Կարգա՛նք սաղմոսները գգուչութիւնով. այն ատեն Տօքթ. Պարզընի հետ մենք ալ պիտի ըսենք. «Իտայէլի երգիչներու ընթացքին հետեւած ենք դարերու մէջէն. հոս ընթացած են անոնք նուագներով, իսկ հոն քալած են տկար քայլերով. հոս ամէն տեսակ թելաւոր, հողմաւոր նւ բաղխական զործիքներով երգած են, իսկ հոն միայն կոտրած թելով քնարի մը տկար ձայնը լսուած է, եւ երբեմն ալ լացող երգիչի մը երգը, որուն քնարը մունջ կը կենայ կախուած ուռիներէն : Մտիկ ըրած ենք այս երգերուն իրենց տարբեր խաղերուն մէջ : Երբեմն անոնց երգերը, լեռներու կատարներէն մեզի հասած են, ուր երգիչներ ուրախութեան ձայնով ողջունած են արշալոյսը. և երբեմն ալ մեր ակա՛ջներուն հասած են ա՛»

նոնց փորձառութեան խորերէն ծագում առնող մրմունջները, փորձառութեան մը՝ ահաւոր, որ դատողութիւնը կը կործանէ, եւ Աստուծոյ վրայ եղած հաւատքը կը կոտորէ: Անոնց քնարները երբեմն հովուական ցուպը բռնող մեղմ ձեռքով հնչած են եւ երբեմն ալ՝ անոնց թելերը կոշտորէն զարնուած են իբր թէ փայտով: Լսած եմ ք այն խոստումները որոնք եղած են մարդոց, խոստումներ ամենաազնիւ օրհնութիւններու. դողահար եղած ենք խոր ու բարձրաձայն անէծքներու առջեւ: Բայց ամէնէն աւելի գտած ենք հաւատք մը առ Աստուած որ թէև յաճախ սխալ հասկցուած է, սակայն բոլորովին անյաջող եղած չէ. գտած ենք երկնային արդարութեան վերջնական լազթութեանը վրայ վստահութիւն մը, որ ամբողջովին աչքերէ անտես եղած չէ. գրտած ենք հաւատք մը տիեզերքի մասին՝ վերջնական լուծումով մը, բարոյական ըլլալուն, հաւատք մը թէ Աստուած կ'ապրի, թէ իրենները կը հոգայ, թէ արդարութիւնը չկրնար մոռցուիլ եւ ոչ ալ մեղքը անոնս առնուիլ):

Ս. Պ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

(ՎԵՐՋ)



### ՕՍՄԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Օսմանեան գրականութեան մէջ բոլորովին իսկատիպ ու հետաքրքրաշարժ գորուածք մըն է այն բանահիւստութիւնը՝ որ Նիրհեբգ եւ կամ աւելի ճիշդը Քուենի քաղերգ անունով ծանօթ է հաւաքածոներու մէջ, Հեզինակը, բարձրաստիճան անձնաւորութիւն մը, կը պատկանի այն գրական դըպրոցին, որ չուզեր կարծես օսմանեան լեզուն իր ընդունակութեան սահմաններէն հեռացընել, եւ ա՛ս կը թուի ըլլալ պատճառը որ իր գրուածքներուն մէջ միշտ չափաւոր ու զգուշաւոր նորութիւն մը միայն կը նշմարուի: Բարձրաչուք գրագէտին զեղեցիկ դըպրութեանց, հոգեբանութեան եւ մասնաւորապէս իրաւագիտութեան, փիլիսոփայութեան երկարաշունչ դասաւանդութիւնները՝ զազափարի ու խիստ տրամաբանութեան մարդը ներկայացուցած են զինքը, սակայն կրնայ ըսուիլ որ Պղատոններու սիրահարը ոչ նուազ դարպաս ըրած է Մուսաներուն: Իրաւագիտական Փիլիսոփայութեան մէջ անսթիւեթ լեզու մը կիրարկած ըլլալով մէկտեղ՝ երբեմն վաղեմիներու յատուկ դասական խրթնաբանութեանց բաւիղին մէջ— ազդուելով անշուշտ պարսկերէնի խորին հմտութեանէն— Աոհիանի մը թելը փնտռել կուտայ ընթերցողին: Այս կարգի արձակ մըն է «գիտնականէ մը եօթը տարեկան աղջնակի մը» ձմեռ ատեն կրակ ուզելու մանրամասնութիւնը:

Նիրհեբգը, զոր գրեթէ նոյնութեամբ թարգմանեցինք, այս գրագէտին գալափարապաշտ խառնուածքին արտայայտութիւնը ու խորունկ մտածումներու խտացում մըն է: Ան՝ Մորիէոսի բազուկներէն զրկուողներու տրտունջը քերթողական երկայնամտութեամբ մը արձանագրել ուղած է կարծես: Եւ ինչպէս կ'ըսէ, դիւթանքէ եւ առասպելներէ չազդուող այդ պարիկին— քունին— համաշունչներն ու խօսակիցները ուրախ զուարթներն են միշտ: Քերթուածին վերջաբանը ի վեր կը հանէ այն հոգեբանական տառապանքները, որոնք ըստ ինքեան սրտի ըզձանքներու ժայթքումներն են: Ստուգիւսիպատիթեան փափուկ անկողիններն իսկ վշտի մահիճներ կը դառնան ցաւատանջներուն եւ տարիաժոռոններուն համար: Այս քերթուածին լեզուն այնքան անուշ է որքան խորունկ: Հաւաքածոներու մէջ դժուարիւմաց կտորներէն մէկն ալ այս գրուածքն է, որուն տաղաչափութեան համեմատ արտասանութիւնը մէկդի թողուելէն զատ՝ ընդհանրապէս ոգիին թափանցելու յոգնութիւնը, զուր շանք մը նկատուած է շատերու կողմէ: Ըստ երեւութիւն դիւրին կարծուած այդ Նիրհեբգին թարգմանութիւնը կը դնենք ստորեւ, յուսալով որ ոչ նուազ հաճոյք պիտի առթէ գրասէրներուն ու անուշ քունէ զրկուողներուն:

Նիրհեբգը, զոր գրեթէ նոյնութեամբ թարգմանեցինք, այս գրագէտին գալափարապաշտ խառնուածքին արտայայտութիւնը ու խորունկ մտածումներու խտացում մըն է: Ան՝ Մորիէոսի բազուկներէն զրկուողներու տրտունջը քերթողական երկայնամտութեամբ մը արձանագրել ուղած է կարծես: Եւ ինչպէս կ'ըսէ, դիւթանքէ եւ առասպելներէ չազդուող այդ պարիկին— քունին— համաշունչներն ու խօսակիցները ուրախ զուարթներն են միշտ: Քերթուածին վերջաբանը ի վեր կը հանէ այն հոգեբանական տառապանքները, որոնք ըստ ինքեան սրտի ըզձանքներու ժայթքումներն են: Ստուգիւսիպատիթեան փափուկ անկողիններն իսկ վշտի մահիճներ կը դառնան ցաւատանջներուն եւ տարիաժոռոններուն համար: Այս քերթուածին լեզուն այնքան անուշ է որքան խորունկ: Հաւաքածոներու մէջ դժուարիւմաց կտորներէն մէկն ալ այս գրուածքն է, որուն տաղաչափութեան համեմատ արտասանութիւնը մէկդի թողուելէն զատ՝ ընդհանրապէս ոգիին թափանցելու յոգնութիւնը, զուր շանք մը նկատուած է շատերու կողմէ: Ըստ երեւութիւն դիւրին կարծուած այդ Նիրհեբգին թարգմանութիւնը կը դնենք ստորեւ, յուսալով որ ոչ նուազ հաճոյք պիտի առթէ գրասէրներուն ու անուշ քունէ զրկուողներուն:

## Ն Ի Ր Հ Ե Ր Գ Ը

Մարմինն ու հոգին հանգիստն ես ո՛վ փուն,  
 Բաժանումն՝ սուզի սանջանք մըն է գեհենի,  
 Արժանի ես կոչուելու ձարսարապէս մարմնի,  
 Վասն զի զայն կը նորոգես:

Գաղուսդ քարն ոյժ կուսայ իրանին,  
 Թեպէտեւ փոքրիկ մահ կ'ըսեն ֆեզի:  
 Կարծրասիրտք փարոււնովդ կը բերկրի,  
 Թէ իսկ հին փսիաք մը ըլլայ իր տեղին:

Տաղտուկն ու խոնջեկն վանելու համար  
 Դուռդ ապառէն է մեծին պզտիկին,  
 Թէ չափազանց աշխատի մեկը  
 Իսկոյն եր բռնես անոր ֆղանցեան:

Բեզի պէս ազնիւ հիւրի մը համար՝  
 Կ'արժէ որ շինուի արոն մը արծաթ կամ ոսկի:  
 Եթէ երազներու, ցնորֆներու հոյրը,  
 Գտնէ մուր գիշերին մեջ ուղին արտին,

Ոտնակոխ կ'ըլլար սիրտը համակ,  
 Եթէ չըլլայիր նեցուկ, յեւարան:  
 Կոդսը նկարագրութեամբ ու գոհութեամբ միշտ,  
 Գիտունները գեղ կը պատուեն:

Ես առանց ֆեզի չեմ ուզեր երբեք,  
 Արոն ոսկեղեն, մեծաֆս անկողին:  
 Զանազանակ երեւոյթներ ցոյց տալով,  
 Մերք կ'աւետես, մերք կը գուժես,

Ի՞նչ կ'ըլլայ եթէ գրիչ մը գեղեցկագիր.  
 Հանգամանֆդ այսպէս նկարագրէ:  
 Ապագայ աշխարհին իրողութիւնները ցոյց կուտաս,  
 Կը պարզես գաղտնագիրը նախասահմանութեան:

Եռիւսկան ասեանին մեջ երագի.  
 Ի՞նչ զարմանալի պատկերներ կը կերպարանես.  
 Թեւ ֆիչ մը շաւ օրի բարեկամ կը բռնիս,  
 Սակայն այս հանգամանֆը ֆու մեջ փոփոխական է.

Միշտ ուրախ գուարթները համաշունչ են ֆեզ,  
 Ուրիշ մեերիւն, խօսակից չունիս:  
 Գիրգ անկողնի մեջ միւնջեւ առատ,  
 Երկայութեանդ քարիֆով կը յագեանս:

Գինիի իւրախանֆի մեջ ներկայ ես միշտ,  
 Զես թեւանար երբեք այդ մասին:  
 Վշտահարներու հառաջանֆն ու ողբը.  
 Աւա՛ղ որ չեն ազդեր ֆեզի,

Պարիկ մըն ես դու անկարելիք,  
 Թէ դիւրութեան եւ առասպելի:

Երեք բախտը չարքնեայ,

Միացունիդ յոյսը չարդիւնաւորուիր :

Յաւատանց արեւն խոյս կուտաւ այնպէս,  
Ինչպէս խոյս կուտայ որսը որսորդին :

Նաւանաւանդ գեղեցիկ հեծեծող չարփսլիսներ,

Կատօսովդ վշտի մահիճին գերին կ'ըջրան :

Զրկանիքիդ քնոյր (\*) կրող շատեր կան,  
Մեկն աչ նուստս Միւնիփն է :

Այս տեսակ դասական գրուածքները եթէ քննադատելի իսկ ըլլան՝ իրենց կարեւորութենէն ու հրապոյրէն բան մը չեն տուածեր, որովհետեւ մեծ վարպետի գրիչն ու պրոպաղանդ միտքը ամէն բան հաշուի առած ու այնպէս հրապարակ նետած է. Միւնիփ Փայա «Մէքթէպ» վերնագրով քերթի պի պիսն (\*):

(\*) Քնատութեան կ'ակնարկէ :

(\*\*) Ոտանաւորի 30 տեսակներէն մէկն է : Կ'ուեննայ մէկէ աւելի յօդուածներ՝ առանձին յանգով, եւ անոնց վերջը կը գտնուի տարրեր յանգով տարրեր տուն մը :

մըն ալ ունի, ուր դպրոցին բարձրագոյն նշանակութիւնը ի վեր կը հանէ դրուատելով ու թուելով անոր բարիքները : Այդ քերթութեամբն ալ գերազանցապէս արեւելեան դրոշմ մը ունի :

Վերջացնելով ըսենք թէ՛ քիչը բայց լաւագոյնը լոյս ընծայելու նախանձախընդութիւնը ընդհանրապէս շատ քիչերը ունեցած են : Այդ քիչերն են միշտ հոյակապները, որոնք գրականութիւն մը կը ներկայացնեն :

ՍՏԵՓԱՆ ԹԱՊԱԳԵԱՆ

## ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔ

Քէմախի կողմերը կեդրոնական մեծ եկեղեցիներէ հեռու՝ փոքր գիւղի մը Աւետարանական ժողովուրդը, որ տարիներէ ի վեր Երէջի կամ Աւետարանիչի մը այցելութիւնը չէ վայելած, ամուսնութեան խնդիր մը ունենալով, կը հարցնէ թէ արտօնուած քարոզիչ մը ինչո՞ւ չի կարենայ պսակի օրհնութիւն կատարել ամուսնանալ ուղղներու վրայ, եւ եթէ չի կրնար պսակել, ի՞նչ ընելու են ամուսնանալ ուղղները : Աւետ. եկեղեցին կը դաւանի թէ, ամուսնութիւնը, ուրիշ եկեղեցիներէ սմանց ընդունածին նման՝ եկեղեցական խորհուրդ չէ, այլ աշխարհային բան մը. բայց ինչպէս ուրիշ ամէն աշխարհային գործերու համար Աստուածային օրհնութիւնը կը հայցենք, նմանապէս կեանքի ամէնէն նշանաւոր եւ ցմահ տեւական եղող ամուսնական զէպքի

մը համար ալ՝ Աստուածային օրհնութիւնը կը հայցենք, եւ որովհետեւ եկեղեցական պաշտօնեայի մը օրհնութիւնը պէտք է, մեր եկեղեցիներն ալ վայելուչ եւ պատշաճ համարած են որ իրենց հովիւը ըլլայ պսակը օրհնող : Արդ, ես կը կարծիմ թէ երբեք որ եւ է անտեղութիւն կամ անպատեհութիւն մը չկայ, եթէ պսակը օրհնող հովիւը ձեռնադրուած երէց կամ արտօնուած քարոզիչ մը ըլլայ, երբ ձեռնադրուած երէց չունին :

Աւետ. ժողովուրդին մէջ սկիզբէն ի վեր ամուսնանալ ուղղ երիտասարդին ու աղջկան կողմէ արտօնութիւն կը խնդրուի՝ տեղական վարչութիւնէն կամ Թաղական ժողովէն որ՝ կը քննէ թէ ասոնց ամուսնական կապով միութեան համար որ եւ է արգելիչ պատճառ մը կա՞յ. թէ երկուտեք համահաճ հաւանութեամբ կ'ուզեն իրար առնել՝ թէ որ եւ է ճնշման կամ ստիպման

մը տա՞կ կը գտնուին. թէ չափազա՞ս են եւ տարիքի յարմարութիւն ունի՞ն եւն. և երբ արգելք մը չի տեսնուի, վարչութիւնը կամ թաղական ժողովը կը տեղեկագրէ տեղին Ազգապետին եւ Ազգապետ չի գտնուած պարագային՝ անոր փոխանորդին կամ վարչութեան Ատենապետին, և աս ալ պըսակի հրամանը կուտայ. այն ատեն որ եւ է հովիւ, ըլլա՛յ երէց, ըլլա՛յ արտօնուած քարոզիչ, Ազգապետական հրամանը ձեռքը, կարող է այդ պսակը օրհնել: Ես կը ճանչնամ չձեռնադրուած պաշտօնեայի ձեռքով կատարուած պսակի օրհնութիւններ, որոնք այնքան ամուր և այնքան բեղմնաւոր եղած են, որքան ձեռնադրուած պաշտօնեայի մը կատարած պսակը:

Աւետ. եկեղեցին շնորհունիր թէ պսակը եկեղեցիի խորհուրդ մըն է. եւ այսպէս, անիկա զուտ աշխարհային բան մը ըլլալով, Ազգապետարանին ու Ազգային վարչութեան իրաւասութեան վերաբերող խնդիր մըն է. ուստի անհրաժեշտ է որ Կեդր. Ազգապետարանը նշանտուութեան ու ամուսնութեան վերաբերող օրէնք մը հաստատելով, զայն պարտաւորիչ ընէ ամէն տեղի Աւետարանականներուն համար, այնպէս որ նրմանօրինակ պարագաներու ատեն՝ շփոթութիւններ ու սխալմունքներ չի պատահին: Օրինակի համար, պէտք է վաւերական կանոն մը ունենանք, թէ նշանտուութիւնը կրնա՞յ օրինաւոր համարուիլ, եւ այդ պարագային օրինական ձեւակերպութիւններ պէ՞տք են եւ որո՞նք են անոնք. Դէ ամուսնութեան համար արեւնական քանի՛ աստիճանի մերձաւորութիւն ունեցողներու պսակի օրհնութիւն ներելի չէ. թէ Քարոզիչ կամ Երէց կամ Միսիօնար, առանց Ազգապետական հրաման ունենալու, կարո՞ղ են պսակի օրհնութիւն կատարել. թէ վարչութիւն կամ թաղ. ժողով, ո՞ր պարագաները կրնան պսակի արգելք նկատել. թէ ո՞ր մարմինը ձեռնհասութիւն ունի ամուսնական առժամեայ զաղարուժ վճռել և ի՞նչ պայմաններու տակ. թէ Կեդր. Ազգապետարանէն այս մասին չի հաստատուած վճիռ մը, վերջնական ու վաւերական հանգամանք մը

կրնա՞յ ստանալ. թէ այդ պարագային եթէ զաւակներ կան, որո՞ւ կը վերաբերին անոնք եւ անոնց սնունդը ո՞վ պարտի հոգալ. թէ խոստմնագանց նշանածներու մասին պատժական տրամադրութիւններ պէ՞տք են եւ ի՞նչ են անոնք. թէ տարբեր դաւանութեան վերաբերող երիտասարդ մը կամ ազդիկ մը, Աւետ. դաւանութեան վերաբերողի մը հետ պսակուելու ատեն նկատելի ի՞նչ ձեւակերպութիւններ կարելի որ են:

Վերջապէս ասոնք եւ ասոնց նման խնդիրներ, լուրջ ուշադրութեամբ ուսումնասիրելով, երկրին օրէնքներուն և Աւետարանական եկեղեցիին դաւանութեան եւ զըրացի ժողովուրդներու հետ յարաբերութեան համեմատ յարմար ամուսնութեան օրէնք մը ունենալ՝ մեր համայնքին համար անհրաժեշտ կարեւորութիւն ունի, որուն նախաձեռնութիւնը կը կարծեմ թէ Կեդրոնական Ազգապետարանին կը պատկանի: Մ. Ն. Հ. Ր. Ա. Ն.

Պէրպէրեան վարժարանի այս տարուան ընթացաւարտներուն աւարտական ճառերուն ընթերցումը եւ ընդհանուր արտասանութիւնները տեղի ունեցան նոյն վարժարանին մէջ, վարժարանը այս տարի ազգին կ'ընծայէ 16 ընթացաւարտներ, որոնք են. — Պարոնայք՝ Ռուբէն Չիլինկիրեան, Թորոս Սօֆեան, Աշոտ Իւթիւճեան, Լեւոն Եավրուեան, Արամ Զարֆեան, Մինաս Միքայէլեան, Գեղամ Գավաֆեան, Եզնիկ Քաջունի, Պետրոս Մալխասեան, Ծնորհք Տէյրմէնճեան, Մատաթիա Տէր-Մարկոսեան, Յարութիւն Հմայեան, Մանուկ Պասմաճեան, Հրանտ Փանոսեան, Յակոբ Զպուքճեան եւ Յակոբ Յակոբեան: Ժամանակի սղութեան պատճառով, չըջանաւարտներէն հետեւալները միայն կարգացին իրենց աւարտական ճառերը. Պարոնայք՝ Մինաս Միքայէլեան՝ Հանհարը, Յարութիւն Հմայեան՝ Եփեսի եւ Ասուածաւուելչ, (Անգլ.), Լեւոն Եավրուեան՝ Գեղեցիկը եւ բարին (Ֆրանս.), Եզնիկ Քաջունի Գեղարուեսին բարեօրջումը, Մատաթիա Տ. Մարկոսեան՝ Յառաջիմուրիւն (Օսմ.) եւ Ռուբէն Չիլինկիրեան՝ Մարդը:



### Է Լ Ի Զ Է Ռ Ը Ք Լ Ի Ի Մ Ե Ծ Ա Շ Խ Ա Ր Ն Ա Գ Ր Ա Գ Ե Տ Ը

Շարժուս ծանուցուեցաւ համբաւաւոր աշխարհագրագէտ Էլիզէ Ռըքլիւի մահը, որտի հիւանդութենէ, 75 տարեկան:

Էլիզէ Ռըքլիւ Ֆրանսացի բողոքական պատուելիի մը զաւակն էր, և ծնած 1830ին: Իր նախնական ուսումը իր հայրենիքին՝ Ֆրանսայի մէջ առնելէ ետքը, կատարելագործեց զայն Պերլինի համալսարանին մէջ, ուր աշակերտեցաւ հոչակաւոր Բիթթէրի: 1851 Դեկտ. 2ի ծանօթ թուականէն ետքը, հարկադրուեցաւ մեկնել Ֆրանսայէն: 1852էն մինչև 1857՝ աղքատաբար, պարկը ուսը, ճամբորդեց Անգլիա, Իռլանտա, Մ.Նահանգները, Կեղր. Ամերիկա և Նոր Կրճնատա, ուր ապրեցաւ քանի մը տարի:

Բարիզ գարձին՝ աշխատակից եղաւ Ռըվի sk sko Մօնի, Թուռ սիւ Մօնի, և ուրիշ պարբերական հանդէսներու, որոնց մէջ հրատարակեց իր ուղեւորական գէպ. քերը և աշխարհագրական քննութիւնները: Ռըքլիւ 1860ին գրեց Առաջնորդ Լոնտոնեան Ուլեւորութեան, 1861ին Ճամբորդութիւն Սիերա Լեօնա, Սեք Մարք գործերը, յետոյ գիրք մը Միջերկրականի քաղաքներուն վրայ: Իր էլիա եղբորը հետ խմբագրեց Ֆրանսական գիւղախումբերուն մէկ բաւարանը: Սակայն տեւական արժէքով իր մեծ գործն է Երկիրը, որ շատ մը լեզուներու թարգմանուած է, և հակառակ իր խոչոր ծաւալին՝ մէկ քանի անգամ տպագրուած:

Ռըքլիւ սակայն իրրև միայն աշխարհագրական մատենագիր նշանաւոր չէ: Գրած է նաև բազմաթիւ յօդուածներ քրիստոնէական ընկերվարականութեան ըմբռնումներուն վրայ: Այս մասին իր գործունէութիւնը ցոյց տուած է գլխաւորաբար 1871էն ետքը: Իր գէմ բացուած դատավարութեան ատեն, ջերմապէս պաշտպանեցին զինքը աշխարհագիր Շառթօն և օղանաւորդ Նա-

տառ: 1879էն ետքը վերադարձաւ Բարիզ: Գաղաքային ամուսնութեան սկզբունքին ջատագով հանդիսացաւ, և գործնականապէս ալ ապացուցուց այդ բանը, իր երկու աղջիկները ամուսնացնելով առանց կրօնական արարողութեան:

1892 Սեպտ.ին բրօքէտէօն անուանուեցաւ Պրիւսէլի համեմատական աշխարհագրութեան համալսարանին մէջ, իր Տիեզերական Աշխարհագրութեան առաջին հատորը հրատարակ ելած է 1875ին, տասներիներորդ հատորն ալ 1901ին:


Ռըքլիւ շատ համեստ և քաջուած կեանք մը կ'անցընէր Պրիւսէլի մէջ, և բարեգործութիւններ կ'ընէր: Իր Տիեզերական Աշխարհագրութեան համար զանազան գիտնական ակումբներէ ընդունած Ոսկի Միտալները ծախեց և արդիւնքը բաժնեց աղքատներուն:

Ռըքլիւ յամառ և համոզուած բուսակեր մըն էր, և մսակերութեան դէմ բուռն պայքար մը մղած է:

Ժան Ժաք Էլիզէ Ռըքլիւի հետ կ'անհետանայ մէկը այն արժանաւոր և առաջնակարգ գիտնականներէն, որոնք մասնաւոր երկրի մը չեն վերաբերիր, այլ ժառանգութիւնն են բովանդակ մարդկութեան, և ո՞նց միակ փառասիրութիւնը և մտահոգութիւնն է Գիտութիւնը:

Արգի Աշխարհագրութեան անկորնչելի փառքը կը կազմեն Ռըքլիւի Նոր Տիեզերական Աշխարհագրութիւնը, Երկիրը և մադիկ գործերը, որոնց համեմատ ամենաընտիր աշխարհական քարտէսներ պատրաստուած են, որոնք միշտ պիտի մնան իբր ամէնէն ուղիղ և ճշմարիտ ցուցակները աշխարհագրական գիտութեան: Ոչ ոք իբրև աշխարհագրագէտ ունեցած է համբաւաւոր Ռըքլիւի համբերատարութիւնը, իր անձնական բոլոր կորովը և մաքի բովանդակ թափը նուիրելու համար աշխարհագրական մեծ գործին, Տիեզերական Աշխարհագրութեան, 19 հատոր, որոնց իւրաքանչիւրը 1000 էջէ կը բաղկանայ: Ամբողջ Եւրոպան և Ասիական Արեւելքը ճամբորդած է և Ամերիկայի բոլոր աշխարհագրական գաղտնիքներուն թափանցած:

### ԱՐԵՒԵԼԱԳԷՏՆԵՐՈՒ ԺԴՐԴ ՄԻՋԱԶԳՈՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ



Ապրիլ 19-26ին Ալճերիի մայրաքաղաքին՝ Ալճերի մէջ գումարուեցաւ Արեւելագէտներու ԺԴՐԴ միջազգային համաժողովը, որուն կը մասնակցէին մօտ 600 գիտնականներ եւ արեւելագէտներ, եկած աշխարհի զանազան ծայրերէն:

Համաժողովին պատուոյ նախագահն էր Շուէտի քաղաք Օսկար Բ., իսկ հովանաւորն էր աւստրիական արհիդուքս Բայնէր: Բացման նիստին, որ տեղի ունեցաւ, 19ին, կը նախագահէր Պ. Ժօնար, իսկ փակման նիստը, 26ին տեղի ունեցաւ Ֆրանսայի ժողովրդական կրթութեան նախարար Պիէնվընիւ-Մարդէնի նախագահութեամբ:

Համաժողովին նախագահ ընտրուեցաւ Պ. Բրնէ Պատէ, Ալճերի Բարձր դպրոցի վերատեսուչը, որ միևնոյն ժամանակ կարգադիր մասնաժողովին նախագահն էր:

Զանազան պետութիւններ, Գերմանիա, Աւստրիա-Հունգարիա, Պելճիքա, Տանըմարքա, Միացեալ Նահաճներ, Ֆրանսա, Հօլանտա, Անգլիա, Իտալիա, Շուէտ, Ռուսիա, Զինաստան, Եգիպտոս, Պարսկաստան զրկած էին պաշտօնական պատուիրակներ: Եւրոպայի գրեթէ բոլոր համալսարանները եւ նշանաւոր գիտնական հաստատութիւնները նոյնպէս զրկած էին պատգամաւորներ, որոնց մէջ կային նշանաւոր արեւելագէտներ եւ քանի մը հայագէտներ, ինչպէս Պարպիէ տը Մէնար, Հուդաս, Սենար, Բրօֆ. Մէրքս (որ Հայտելպէրի համալսարանին բրօֆէսէօր է եւ 10 տարիէ ի վեր է որ կը զբաղի հայերէն Աստուածաշունչի ուսումնասիրութեամբ), բրօֆ. Կարօլտէս (Աթէնքի համալսարանէն) եւ ուրիշներ:

Համաժողովը բաժնուած էր 7 ճիւղերու. Ա. Հնդկաստան, արիական լեզուներ եւ Հնդկաստանի լեզուներ. այս ճիւղին կը վերաբերէր հայագիտութիւնը. ասոր նախագահն էր Սէնար: Բ. Սեմիտական լեզուներ. նա-

խագահն էր Ֆիլիփ Պերժէ. Գ. Արաբ, Թուրք եւ Պարսիկ լեզուներ. նախագահն էր Ռրնէ Պատէ. Դ. Եգիպտոս արիական լեզուներ. Մասակաւար. Ե. Ծայրագոյն Արեւելք. նախագահն էր բրօֆ. Կորտիէ. Զ. Յունաստան եւ Արեւելք. նախագահն էր Բրօֆ. Դիլլ. Է. Արիական հնագիտութիւն եւ իսլամ առուես:

Իբրեւ հայ արեւելագէտ, Համաժողովին կը մասնակցէր միայն Պ. Հ. Առաքելեան:

Վերոյիշեալ 7 ճիւղերուն մէջ կարգացուեցան մօտ 150 բանախօսութիւններ, որոնց մէջ, իբրև մեզ համար աւելի հետաքրքրական, պէտք է արձանագրել հետեւեալները. 1. «Կովկասեան լեզուներու ուսումնասիրութիւնը (Դիլլը)». 2. «Մենդեան գրքի ազգագրական պատկերին իմաստը եւ նպատակը» (Հայէվի): 3. «Թուրք-թաթար գրականութիւնը» (Դանօն): 4. «Ժամանակակից Գերմաները Պարսկաստանի մէջ» (Հ. Առաքելեան): 5. «Արաբ լեզուն եւ անոր ճիւղերը» (Կոմս տը Հանպէրկ): 6. «Հայոց գրականութեան ուսումնասիրութեան կարեւորութիւնը արեւելագիտութեան համար» (Հ. Առաքելեան): 7. «Կենդանիներու պաշտամունքը Եգիպտոսի մէջ» (Վիդէմանն): 8. Ափրիկէի եկեղեցիները եւ արեւելեան ազդեցութիւնները» (Դիլլ): 9. Պարսկական արուեստը» (Սարր): 10. «Դիցաբանութեան մէջ յիշուած Յարալէզները» (Բրօֆ. Կարօլտէս):

Բացի գիտական բանախօսութիւններէ, եղան դասախօսութիւններ ալ, համաժողովին պաշտօնական նիստերէն դուրս, քաղաքապետութեան դահլիճին մէջ:

Ի պատիւ համաժողովին անդամներուն՝ երեկոյթներ տրուեցան, ինչպէս նաև շքեղ պարահանդէս մը, որուն հրաւիրուած էին մօտ 700 անձեր:

Փակման նիստին, ժողովը զբաղեցու այն հարցով թէ, ո՛ւր պէտք է գումարել յաջորդ ժՄ.րդ համաժողովը. Որոշուեցաւ յաջորդ համաժողովը գումարել 4 տարի ետքը՝ 1909ին, Բօքէնհակի մէջ:

ԻԶՄԻՐԵԱՆՑ ԳՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԷՆ

ՄՐՅԱՆԱԿԻ ԱՐԺԱՆԱՑՈՂ ԵՐԿԵՐԸ

Կը յիշուի թէ, Գրական Յանձնաժողովը սակէ երկու տարի առաջ բանասէրներուն կ'առաջարկէր պատրաստել, բառազիրքեր հետեւեալ երեք ճիւղերուն վրայ.

Ա. Նորակերտ բառեր և նորաբանութիւն:

Բ. Արեւմտեան գաւառաբարբառ:

Գ. Արեւելեան գաւառաբարբառ:

Քննիչ մասնախումբը, որ կը բաղկանար Տ. Բարզէն Ծ. Վրդ. է, եւ Ռ. Յ. Պէրպէրեան, Հրանտ Ասատուր, Թովմաս Թէրզեան և Պաշիկ Ուղուրիկեան էջէնտիններէ, իրեն հասած 18 երկերը վերի ծրագրին համաձայն բաժնելով, զանոնք անջատաբար քննած եւ տեղեկագիրը ներկայացուցած էր իզմբեանց Յանձնաժողովին: Յանձնաժողովը անցեալ ուրբաթ օր գումարուեցաւ, եւ նկատի առնելով ներկայացուած գործերուն վրայ Մասնախումբին տեղեկագիրը, զոր պատրաստած էր Ռ. Յ. էֆ. Պէրպէրեան, հետեւեալ կերպով պսակեց մրցանակի արժանացող գործերը.

Ա. ՄՐՅԱՆԱԿ՝ «ՊՈԼՈՅ ՀԱՅԵՎԱՐԸ», գործ՝ ԹԷՂՈՒԿԻ՝ 35 օսմ. ոսկի:

Ա. ՄՐՅԱՆԱԿ՝ «ԳԱԻԱՌԱՐԱՐԱՌԻ ԲԱՌԱՐԱՆ» (Պատկերագար), ՏԻԳՐԱՆ ՉԻԹՃՆԱՆ՝ 35 օսմ. ոսկի:

Բ. ՄՐՅԱՆԱԿ՝ «ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆ» ՍԻՄՈՆ ԳԱՓԱՄԱՃՆԱՆ՝ 30 ոսկի:

Բ. ՄՐՅԱՆԱԿ՝ «ԳԱԻԱՌԱՐԱՐԱՌԻ ԲԱՌԱՐԱՆ», ԲԱՐՍԷՎԱՄԵԱՆ՝ 30 ոսկի:

Բ. ՄՐՅԱՆԱԿ՝ «ԳԱԻԱՌԱՐԱՐԱՌԻ ԲԱՌԱՐԱՆ», ԳԱՐՈՒՍԱՆ՝ 30 ոսկի:

Մրցանակի արժանացող գործերէն թէօւրիկի՝ Պոլսոյ Հայեվարը շուրջ 2500 էջէ բաղկացած ընդարձակ գործ մըն է, ուր խտացած են բուն Պոլսահայերուն յատուկ բառերը, ասութիւնները, առածները, բանա-

ձեւերը, սովորութիւնները, շուկայիկ լեզուն եւ կանացի խօսքերը, ժողովրդական և կրօնական բժշկութիւնը, քերականութիւնը, այբուբէնի 38 գիրերուն վրայ ընդարձակ ուսումնասիրութիւններ, ստուգաբանական բացատրութիւններ և օտար լեզուի բառերու հետ համեմատութիւններ, Պոլսոյ բոլոր ձուկերը, թռչունները, տունկերը իրենց Փրանսերէններով և թուրքերէնով ստուգուած են:

Չիթճեանի Գաւառաբարբառը որ 16 գաւառական գործերէն ամէնէն երկարաշունչ եւ խնամուած երկն է, կը պարունակէ գաւառներու յատուկ բառերը, խիստ խնամով հաւաքուած եւ զասակարգուած:

Երկրորդ մրցանակի արժանացող երեք գործերէն՝ Սիմոն Գաբամաճեանի Հայեթեհի Բառարանը սկսած է հրատարակուիլ արդէն պրակ պրակ: Քննիչները դիտողութիւն ըրեր են թէ՛ աս իր մէջ ո եւ է առաւելութիւն չունի իբր Հայերէն նոր լեզուի գործ, թէ՛ այդ բառարանը վեհնախնայի Առձեռնին մէկ քաղուածն է, իր մէջ նոր եւ գաւառական բառերու աննշան մթերք մը պարունակող, ան ալ արդէն գտնուածներէն: Ս. Պատրիարքն ալ նոյն դիտողութիւնը ըրեր է, սակայն մէկ երկու ժողովականներու պընդումին վրայ, որոշուեր է ոչ թէ իբր մրցանակ, այլ իբր քաջալերութիւն՝ գումար մը յատկացնել, որպէս զլ սպագրութիւնը շարունակուի:

Իսկ Բարաղամեանի Գաւառաբարբառը և Գաբիկեանի Գաւառաբարբառը աշխատուած գործեր են, խնամով եւ խղճմտութեամբ պատրաստուած, մանաւանդ Գաբիկեանինը, որ բուսաբանական բառերու մասին անմրցելի է:

Ասոնցմէ դուրս Արեւելեան գաւառաբարբառին վրայ Ղարաբաղի Գաւառաբարբառը, և Մարկոս էֆ. Աղաբեկեանի երկը՝ երկու մեծ գաւառաբարբառներու խառնուրդ գործ մը, անկատար եւ թերի նկատուելով մէկ կողմ թողուած են:

Իսկ արեւմտեան գաւառաբարբառին համար ներկայացուած 15 երկասիրութիւններուն գրեթէ ամէնքն ալ կարելոր եւ արժեքաւոր գործեր են Հայ լեզուի լիակատար բառգիրքի մը պատրաստութեան իբր օգտակար ատաղձներ: Սակայն որովհետեւ կարելի չէր ամէնքն ալ վարձատրել, Յանձնաժողովը մրցանակի արժանացուցած է բացարձակ առաջնութիւն վայելող վերելի հինգ գործերը, արժէքի բաղդատական աստիճանով մը վարձատրելով զանոնք:

## Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ը

### ՕՐՈՒԱՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Մէկ կողմէ կը ծանուցուի թէ գինադադար պիտի կնքուի, իսկ միւս կողմէ կը հերքուին այդ մասին տարածուած զրոյցները: Ամէն պարագայի մէջ յայտնի է թէ հաշտութեան նախաշաւիղ պայմանները մինչեւ որ չորոշուին, կը գրէ «Նիւ Եօրք Հէրրլա», Մանչուրիոյ մէջ գինադադար չպիտի կնքուի: Ճարտական հաշտութեան բանագործանքներուն մեկնումին առթիւ Միքատօին կողմէ անոնց ուղղուած խօսքերը նշանակալից էին, սա պատճառով որ սեւական հաւսուքեան մը համար ամէն ճիգ ի գործ դնել կը յանձնարարէր անոնց: Նոյն թերթը կը շարունակէ: «Նչ որ ալ ըլլայ սակայն, Մանչուրիոյ ռազմադաշտին մէջ ընդարձակ տարածութեան մը վրայ գործողութիւններ կը կատարուին, որոնց վրայ խօսիլ կ'արժէ: Նախ պէտք է դիտել որ հաստատուած չէ այն զրոյցը թէ Զօր. Լինէվիչ երկու կողմէ պաշարուած է Ճարտնցիներու կողմէ: Նորագոյն լուրերը կ'ըսեն թէ բուն կռիւններ տեղի ունեցած են ռուսական աջ թեւին վրայ, բայց տակաւին մանրամասնութիւն չկայ: Ռուսական գիծերուն արեւմտակողմի գօտին աւազուտ անապատներէ, լիճերէ եւ ճախ-

ճախուտներէ բաղկացած ըլլալով, այն կողմերը գինուորական գործողութիւն կատարել անկարելի է: Հետեւաբար ներկայ պարագաներուն մէջ կարելի է ըսել թէ Զօր. Լինէվիչի աջ թեւին վրայ մեծ ճակատամարտ մը անհաւանական է: Քալով ճախ թեւին, այս ալ տակաւին ենթակայ չէ եղած Ճարտնցիներու յարձակումին, որովհետեւ Մարէշալ Օյամայի բանակները տակաւին անցած չեն Քայլունչանէն անդին: Միայն թէ Զօր. Քուրօքիի հրամանատարութեան տակ գտնուող ճարտնական Ա. Բանակը այն կողմերը ռազմական մեծ շարժումի մը պատրաստուած ըլլալով, գուցէ մէկ քանի օրէն բուն կռիւ մը սկսի Ռուսներուն եւ Ճարտնցիներուն միջեւ:

Քուրօքիի ճախ թեւը կը պաշտպանէ Զօր. Նօկիի հրամանին տակ գտնուող ճարտնական Գ. Բանակը, որ դիրք գրաւած է Չինական պողոտային եւ երկաթուղիի գիծին վրայ: Ճարտնական Ե. Բանակը, հրամանատարութեամբ Զօր. Քավամուրայի, Զօր. Քուրօքիի ճախ կողմը կը գտնուի: Զ. Քավամուրա վերջերս կարելոր յաջողութիւններ ձեռք բերաւ, Օմօզայի շրջանները գրաւելով: Զօր. Քուրօքի, Չանկթունկի եւ Քիրիի միջեւ գտնուող Ռուսներուն ճախ թեւին սպառնալու համար, յառաջ պիտի խաղայ Ձունկ-Թաօի եւ Իթունձի միջեւ տարածուող լեռնոտ երկիրներէն: Այս միջոցին յիշեալ Ճարտնցի զօրավարը կը գտնուի Թայլունչէի հարաւ. արեւմտեան կողմը՝ ռուսական դիրքերէն 50 մղոն հեռու, որով սխալ է ռուսական ճախ թեւին պաշարուած ըլլալը:

Վլասիվոսոբի պաշարումը. — Մով. Քամիմուրայի հրամանին տակ գտնուող երեք գրահատորէ, եօթը յաճանաւէ, չորս թնդանօթակիրէ եւ երեսունըվեց թորփիլանաւէ բաղկացող նաւարածին մը սկսաւ ոմբակոծել Վլատիվոսոբը:

\* Ճարտնցիք գրաւեցին Քօնտօ հրուանդանը, Սախալին կղզիին հարաւ արեւմտեան կողմը, կարճատեւ ոմբակոծութենէ մը

վերջ: Ճարոնցիք Սախալինի մէջ գերի բռնուած ոուս զօրքերը փոխադրանաւերը տարին, Ճարոն փոխադրելու համար:

Իսկ Լոնտոնէ կը հեռագրուի թէ Ճարոնցիք ամբողջովին գրաւեցին Սախալին կղզին: կղզին հարաւակողմը գտնուող Քորսաքովսքի պահապան զօրքը, որ կը բաղկանար 2000 հոգիէ, ղէպի հիւսիս կը նահանջէր, բայց Ճարոնցիք զիրենք հալածելով, Ռուսերը անձնատուր եղան: Ճարոնցիք ձեռք անցուցին նաեւ Քորսաքովսքի մէջ գրեւոր թնդանօթները:

\* Զօր. Հագէկավա, իր հրամանին տակ գտնուած 100.000 զօրքով մօտեցաւ Վլադիվոսթոքի: Բերդաքաղաքին պաշարումը գրեթէ սկսած է, և հաղորդակցութիւնները խզուած են: Թէեւ Վլադիվոսթոքի մէջ 85,000 սուս զօրք կայ, բայց պաշարն ու ռազմանիւթը շատ քիչ է, որով հազիւ քանի մը ամիս կրնայ դիմանալ բերդաքաղաքը, կը գրուի թօքիոյէ:

\* Հակառակ հաշտութեան գրոյցներուն, Մարէշալ Օյամա այս պահուս մեծ գործունէութիւն ցոյց կուտայ ճարոնական կառավարութեանն ստացած հրահանգներուն վերայ: Զօր. Քամիմուրա Նինկուդայի կողմէն, Զօր. Քուրօքի Քայլունչէնի կողմէն, և Զօր. Նօկի երկաթուղիի գիծին մօտէն սկսան յառաջանալ ղէպի ինարպին: Այս օրերս մեծ ճակատամարտ մը կը սպասուի:

\* Ռիւդերի Մանչուրեան թղթակիցք կը գրէ. Սպարապետ Լինէվիչ իր գլխաւոր ոյժը կը կեդրոնացնէ Քուանկվանդիէն, Ֆէնքուայի արեւելակողմը, ուր զօրաւոր դիմադրութիւն մը կը պատրաստէ: Ռուս մեծ ոյժեր չկան Քիրինի և Շանկուոնի մէջ, ուստի Ճարոնցիք մեծ ընդդիմութեան պիտի չհանդիպին այդ կողմէն:

\* Ճարոնական կառավարութիւնը իր նաւատորմին կցեց գերի բռնուած ոուս եկակերիւսայաւ, Ռուս և Ալիքսանդր օժանդակ յաճանաւերը:



«Բօրքմփին» անձնատուր. — Ասպտամարութեան վատ արարքին յանդգնող Ռուսական Քնեազ Բօրքմփին գրահաւորը, և իրեն ընկերակցող թորփիլանաւը ռազմանիւթերու եւ պարէնի սպառման պատճառով Քէօսթէնձէ գալով անձնատուր եղան հետեւեալ պարագաներուն մէջ. Բօրքմփին գրահաւորը թորփիլանաւածի մը հետ Քէօսթէնձէ գալով, կէս գիշերէն ետքը ժամը Չին խարսխեց: Ռուսէն կառավարութիւնը առաջարկեց անձնատուր ըլլալ կամ հեռանալ ուսմէն ջուրերէն: Բօրքմփին գրահաւորին և թորփիլանաւածին ասպտամար մարդիկը, յիշեալ առաջարկը՝ ընդունելով անձնատուր եղան և իրենց նաւերը յանձնեցին ուսմէն կառավարութեան: Ռուսէն կառավարութիւնը անոնց վրայ ուսմէն դրօշ պարգեց: Ռուս նաւազները ցամաք ելլելով մաս մաս բաժնուեցան եւ Ռուսմանիոյ զանազան քաղաքները ղրկուեցան:



Հաւատարմեան բանակցութիւնները. — «Նայէ Փրայէ Բրէսէ» կը գրէ թէ, Հաշտութեան բանակցութիւնները Բօրքսմութի մէջ տեղի պիտի ունենան. «բայց Ուաչրնկզրնի ղեսպանածողով» պիտի կոչուի ան դարձեալ: Բանակցութիւնները տեղի պիտի ունենան կառավարութեան պաշտօնատան մէջ, որ ցամաք երկրին հետ կամուրջով մը հաղորդակցութիւն ունեցող կղզիի մը մէջ կը գտնուի Այս տեղը ընտրուելուն պատճառը այն է՝ որպէս զի լիազօրները ենթակայ չըլլան ո՛ր եւ է ազդեցութեան: Լիազօրները Բօրքսմութի պանդոկներուն մէջ պիտի բռնակին: Ճարոնի լիազօրները Յուլիս Չին Սէդըլ եւ Չժին Նէւ Եօրք պիտի հասնին. ոուս լիազօրներն ալ օգոստոսի սկիզբը պիտի հասնին հոն: Երկու տէրութեանց պատուիրակները միեւնոյն օրը Միլիթաուր եւ Տեկփին զրօսանաւերով Ոյսդըրպէյ պիտի երթան եւ պիտի ներկայացուին Նախագահ Բուզովէլի, որ ընդունելութեանն էն ետքը Ճարոնցի լիազօրները պիտի ներկայացնէ Ռուս

լիազօրներուն, եւ յետոյ երկու պատուիրա-  
կութիւնները տարբեր յաժանաւերով Բօր-  
դըսմութ պիտի երթան :

Բեղերսպուրկէն ալ կը հաստատուի այն  
լուրը թէ՛ Ճարոն պատերազմական տու-  
ղանք չպիտի պահանջէ, այլ Ռուսիա յանձն  
պիտի առնէ վճարել Ճարոնի պատերազմա-  
կան ծախքերը, փոխառութիւնները, եւն. :  
Ճարոնցիները գործնական մարդիկ են. հե-  
տեւաբար կարեւորութիւն չեն տար վճար-  
ուելիք գումարին անունին, կը բաւէ որ  
պահանջուածը վճարուի որ եւ է ձեռով :  
Բայց խեղիք է թէ Ճարոնի օտար պահան-  
ջատէրերը պիտի ընդունին որ Ռուսիա  
ստանձնէ իրենց պահանջը վճարել, և եթէ  
այո, ի՞նչ երաշխաւորութեամբ : Ճարոնի  
Սեղանաւորական եւ Տնտեսական Տեղեկա-  
գիրին նոր հրատարակութեան համաձայն,  
Ճարոն 138,891,754 անգլ. ոսկի փոխ առած  
է պատերազմի պէտքերուն համար : Այս  
թիւին մէջ չէ 30,000 000ի վերջին փոխա-  
ռութիւնը՝ այնպէս որ Ճարոնի ամբողջ պա-  
տերազմական ծախքերուն համագումարն է  
170,000,000 անգլ. ոսկի : Պէտք է յիշել նաև  
սպաննուած կամ վիրաւորուած զինուորնե-  
րու ընտանիքներուն վճարուելիք թոշակը,  
սր 15—20 միլիոն անգլ. ոսկիի պիտի հաս-  
նի : Վերջին դէպքերը, մանաւանդ Սախա-  
լինի գրաւումը՝ մեծապէս նպաստած է հաշ-  
տութեան դատին :

**ՄԱՐՔԻ ԽՆԴԻՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ**

«Նայէ Ձերայէ Բրէսէ» կ'ըսէ թէ Փրան-  
քեւգերման համաձայնութիւնը վաւերացնող  
ծանուցագիրը կարճ պիտի ըլլայ : Այդ ծա-  
նուցագիրը հետեւեալ հիմին վրայ խմբագ-  
րուած է :—Պրանսա կը մասնակցի միջազ-  
գային զեսպանախորհուրդին, Գերմանիա կը  
ճանչնայ Պրանսայի ունեցած մասնաւոր  
դիրքը Մարօքի մէջ, Գերմանիա կը ճանչ-  
նայ նաև Պրանսայի եւ զանազան տէրու-  
թեանց միջեւ Մարօքի մասին կնքուած  
դաշնագիրները : Այդ տէրութիւնները չպիտի  
յիշուին ծանուցագրին մէջ : Պիտի ճանչցուի  
Մարօքի անկախութիւնը եւ հողային ամ-

բողջութիւնը : Հետեւաբար Գերմանիա հո-  
ղային ստացում մը չպիտի ընէ : Ծանուցա-  
գիրը կը յիշէ նաև Մարօքի մէջ Բաց դուռի  
պահպանութիւնը : Պրանսա կառավարութիւնը  
կ'ընդունի նաև Մարօքի մէջ պանքաներուն  
եւ ոստիկանութեան միջազգային հանգա-  
մանք մը ուալու սկզբունքը : Դեսպանախոր-  
հուրդին գումարուելիք տեղը որոշուած չէ  
դեռ : Կ'ըսեն թէ Բարիզ, Թանճէր, Մատ-  
րիտ կամ Ժընէվ պիտի դումարուի :

Լոնտոնի թերթերը իրապէս աղբիւրէ կը  
ծանուցանեն թէ ծանուցագրերը պիտի փո-  
խանակուին չուտով : Պրանսա ձեռք բերած  
է այն երաշխաւորութիւնները, որոնք թոյլ  
կուտան իրեն՝ զեսպանախորհուրդին մաս-  
նակցելու. առանց ծուղակի մէջ ինչպիսի :  
Մարօքի մասին Պրանսայի հետ ասկէ առաջ  
գոյացած համաձայնութիւնները պիտի յար-  
գօտին : Միւս կողմէ պիտի ճանչցուի Պրան-  
սոյի դիրքը Մարօքի մէջ :

Կարելու կտակ մը.—Պառն Ժողովի վեր-  
ջին նիստին մէջ կարգացուեր է կտակագիր  
մը, որով երկու բարեսիրտ անձեր 3000 ոսկի  
կը նուիրեն Բերայի եկեղեցիին, կրթական  
չէնքի մը շինութեան համար, պայմանաւ  
որ՝ 12 տարի շարունակ 3000 Փր. ստանան :  
Եթէ մինչեւ այն ատեն մեռնին, եկեղեցին  
որ եւ է դրամ չպիտի վճարէ ժառանգորդ-  
ներուն :

\* Երուսաղէմի հաշուեքննիչ Յանձնաժո-  
ղովը հինգշաբթի օր գումարեցաւ Պատ-  
րիարքարանի մէջ, ատենապետութեամբ  
Խորեան Գրիգոր էֆ.ի, եւ հրաւիրելով Տ.  
Ղեւոնդ Վրդ.ը, զանազան հարցումներ ը-  
րաւ եւ տուած բացատրութիւնները լսեց :  
Ղեւոնդ վարդապետ ուղեց իմանալ թէ իբ-  
րեւ ամբաստանեա՞լ կը հրաւիրուի Պատա-  
խանուեցաւ թէ յանձնաժողովը լոկ քըն-  
նութեան համար է, և ո՛չ զոք կ'ամբաստանէ :

Տե՛ր եւ Տե՛րհե՛ն

Հ. ՍՏԵՓԱՆ Խ. ԻՌԹՈՒՂԱՆ

Տպագ. ՆՇԱՆ Գ. ՊԵՐՊԵՐՆԱՆ  
Պապը Ալի Յուսսուքի Իգսամ լրագրին դեմքիւ 38



Չեռփի, ոսփի եւ ձեռփի ու ոսփի  
միանգամայն մեքենաներ  
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ոնենալ, որ վհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ զիտէ թէ՛

## Ս Ի Ն Կ Է Ր Ի

մեքենան յաւագոյնն է. այս մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատուններուն մէջ՝

Ս Ի Ն Կ Է Ր Ի  
Մ Ա Ս Ն Ա Վ Ճ Ա Ր Ո Ի Մ Ն Ե Ր

ԲԵՐԱ, Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դիմաց.

ԿԱԼԱԹԱ 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.  
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դիմաց.

ՊՈԼԻՍ 1. Սուլթան համամ.  
2. Սուլթան Պայագիտ. (43—50)

Դասերը եւ նորոգութիւնները ձրի.

Կասաբեալ երաւեստորութիւն

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր քաղաքներուն մէջ՝

Ակռայի հիւանդութեան որ եւ է տեսակը՝ ցաւ մըն է՝ որուն դիմադրել անհնար է, և որ մարդուս կեանք եր դառնացնէ: Ու անոր դարմանումին տեսակներն ալ՝ կը վերաբերին արուեստի մը՝ ամէնէն փափուկներէն է արուեստներուն: Որ եւ է ատամնա-յոժ՝ ատամնարոժ է: Իայց ամէն ատամնարոյժ չի կրնար զոհացուցիչ կերպով կատարել ակռայի դարմանում: Պէտք է ուրեմն դիմել ատամնարոյժի մը՝ որ վստահութիւն ներշնչած ըլլայ ամէն կերպով:

## Ա Ր Ա Մ Գ Ա Ր Ա Գ Ա Շ

Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ

Կատարուած կարողութիւն մը ձեռք բերած է այս մասին:

Կատարեալ դարմանում ամէն տեսակ ակռաներու: Մասնաւոր յաջողութիւն արհեստական ակռաներու զետեղման, բնականին անթերի գեղեցկութեամբ: Տարիներէ ի վեր ձեռք բերած իր յաջողութիւնը եւ յաճախորդներու կողմէ գտած ընդունելութիւնը՝ լաւագոյն երաշխաւորութիւններն են՝ որ ակռայի կողմէ ու եւ է նեղուող՝ դիմէ Արամ Գաբրիէլի՝ վստահ թէ՛ յուսացածէն աւելի գոհ պիտի մնայ:

Կը գտնուի ամէն առտու կանուխ Սկիւտար Իճատիէ իր բնակարանը. եւ ամէն օր 4էն մինչեւ 11<sup>1</sup>/<sub>2</sub>, Պօլիս Պահճէ Գարու, Պին-Պիր Չէչիտի դիմացը: Եւ կիրակի օրեր՝ ժամագրութեամբ:

20—30

## Թ Է յ մ ի գ ն է ֆ

ԱՌԱՆՑ ԱՆԳԱՄ ՄԸ ԱՅՑԵԼԵԼՈՒ



Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

Կ. Պօլիս, Ճէլալ Պէյ խանի սակ, թիւ 40

Ո Ի Ր Պ Ի Տ Ի Գ Տ Ն Է Ք

Կերով եւ զարգարուն տուփերով

եւ անհամեմատ աման պիտի

ԱՄԵՆԱՃՈՒ ՄԹԵՐՔ ՄԸ

Հնդկաստանի, Ճավայի, Սէյլանի, Չինաստանի

Թ Է Յ Ե Ր Ո Ի

Եւ մանաւանդ մասնաւորապէս ներածուած

Ծարունակիան թիւ

ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՄԻՋ ՄԵՐ ՎԱՃԱՌԱՆԻՇԸ ՓՆՏՈՒԵՑԻՔ

Բոլոր թից ծախողներու քով

34--50